

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Պրիքստեղի Հանդիպում մը եւս Անցաւ Պատմութեան

Պրիքստեղի մէջ տեղի ունեցաւ Եւրոպայի Խորհուրդի նախագահ Շարլ Միշելի հրաւիրած հերթական հանդիպումը՝ Հայաստանի վարչապետի եւ Ատրպէյճանի նախագահի մասնակցութեամբ: Միշելի նախաձեռնած նախորդ նման հանդիպումին կը մասնակցէր նաեւ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնը: Այդ հանդիպումի ընթացքին էր որ, առաջին անգամ ըլլալով հրապարակ եկաւ Հայաստանի սահմանները Եւրոպացի դիտորդներ ուղարկելու գաղափարը, որուն չընդդիմացաւ Իլիամ Ալիեւը, պայմանաւ որ, այդ առաքելութիւնը ըլլայ կարճաժամկետ: Ինչպէս գիտենք, Եւրոպացի դիտորդները երկու ամիս մնալէ ետք մեկնեցան Հայաստանէն, սակայն կարճ ժամանակ ետք, անոնք վերադարձան աւելի մեծ թիւով ու երկարաժամկետ, առանց նկատի առնելու Ատրպէյճանի բարձրացուցած բողոքները:

Շարլ Միշել փորձ կատարեց նման քառակողմ հանդիպում մը եւս կազմակերպել, սակայն այդ գաղափարը արժանացաւ Պաքոյի մերժումին՝ Ֆրանսան մեղադրելով Հայաստանի ի նպաստ կողմնակալութեան մէջ: Հայաստան պնդեց Ֆրանսայի ներկայութեան վրայ ու այդպիսով Պրիքստեղեան հանդիպումները ժամանակ մը առկալուցեցան:

Մայիսի 14-ին կայացած այս վերջին հանդիպումը վերադարձ էր եռակողմ ձեւաչափին: Հայաստան այս գիշումին գնաց՝ ստանալով հաւաստիացում, որ յաջորդ հանդիպումը տեղի պիտի ունենայ Յունիս 1-ին, Ֆրանսայի եւ Գերմանիոյ ղեկավարներուն մասնակցութեամբ՝ Մոլտավիոյ մայրաքաղաք Քիշինիւի մէջ կայանալիք Եւրոպական Քաղաքական Համայնքի գագաթի ժողովին առըմբեր:

Հայաստանի համար խիստ կարեւոր է Եւրոպական այլ երկիրներու մասնակցութիւնը նման հանդիպումներու, որպէսզի Ատրպէյճան չկարողանայ իր ցանկացած ձեռնարկներով բանակցութիւններու բովանդակութիւնը ու տարբեր պատրուակներով հրաժարի գործադրել գոյացած համաձայնութիւնները:

Պրիքստեղեան հանդիպումէն մի քանի օր առաջ սահմանային Սոքքի շրջանին մէջ Ատրպէյճանի զինուած ուժերը ռազմական գործողութիւններ նախաձեռնելով փորձ կատարեցին գետնի վրայ յաջողութիւններ արձանագրելով Հայաստանին պարտադրել նոր պայմանները: Այս անգամ Բախելով

## Պրիքստեղի Մէջ Կայացաւ Փաշինեան-Ալիեւ-Միշել Հերթական Հանդիպումը

Մայիս 14-ին Պրիքստեղի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Եւրոպական Խորհուրդի նախագահ Շարլ Միշելի եւ Ատրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւի եռակողմ հանդիպումը:

Հանդիպման ընթացքին քննարկուած են տարածաշրջանային փոխադրութեան եւ տնտեսական ենթակառուցուածքներու ապաշրջափակման, երկու երկիրներուն միջեւ սահմանազատման եւ սահմանային անվտանգութեան ապահովման աշխատանքներուն, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման համաձայնագրին, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին իրաւունքներու եւ անվտանգութեան հասցէագրման անհրաժեշտութեան, ինչպէս նաեւ զերիններու, անհետ կորսուածներու եւ այլ մարդասիրական խնդիրներուն վերաբերող հարցեր:

Աւելի քան 4 ժամ տեւած հանդիպման արդիւնքներով Շարլ




Փաշինեան, Միշել եւ Ալիեւ հանդիպումը Պրիքստեղի մէջ

Միշելը յայտարարած է. «Հանդիպման ընթացքին կողմերը կեդրոնացած են Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններու կարգաւորման հարցով յառաջընթացի վրայ: Առաջնորդները խաղաղութեան հասնելու պատրաստ

տակամութիւն յայտնած են: Միասին քննարկած ենք օրակարգային բոլոր հարցերը:

Հարկաւոր է պահել այս թափը եւ քայլերու ձեռնարկել երկիրներէն:

## Թուրքիոյ Մէջ Նշանակուեցաւ Նախագահական Ընտրութիւններու Երկրորդ Փուլ



Թուրքիոյ Բարձրագոյն Ընտրական Խորհուրդի նախագահ Ահմետ Էրթուրհը յայտնած է, որ ըստ Կիրակի օր տեղի ունեցած նախագահական ընտրութիւններու արդիւնքներուն, գործող նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանը ստացած է քուէներուն 49,51 տոկոսը, անոր հիմնական մրցակից Քեմալ Կիլիճը՝ 44,88 տոկոսը:

Երրորդ տեղը Սինան Օղանը է՝ 5,17 տոկոս, եւ չորրորդ տեղն է քուէարկութեան առաջ մրցապայքարէն դուրս եկած Մուհարրեմ Ինճէն, որուն օգտին 0,44 տոկոս տրուած է:

Թուրքիոյ մէջ նախագահական ընտրութիւններու առաջին փուլի վերջնական պաշտօնական արդիւնքները պիտի հրապարակուին Մայիս 19-ին:

«Այսպիսով, թեկնածուներէն ոչ մէկը ստացած է նախագահ ընտրուելու համար անհրաժեշտ թիւով քուէներ, ուստի ուժի մէջ կը մտնէ թիւ 6271 օրէնքի պահանջը,

որով տեղի պիտի ունենայ ընտրութիւններուն երկրորդ փուլը: Այն տեղի պիտի ունենայ 2023 թուականի Մայիս 28-ին», ազդարարած է ընտրական կառուցչին ղեկավարը:

Թուրքիոյ նախագահի երրորդ թեկնածու Սինան Օղանը, որ ընտրութիւններուն ստացած է երեք թեկնածուներէն ամենաքիչ ձայները (5%-էն աւելի), արդէն խոստացած է ընտրութիւններու երկրորդ փուլին աջակցել Թուրքիոյ ընդդիմութեան առաջնորդ Քեմալ Կիլիճը:

Թուրքիոյ նախագահի պաշտօնին համար մրցարշաւէն դուրս եկած, սակայն, նախնական տուեալներով, 200 հազարէն աւելի ձայն ստացած Մուհարրեմ Ինճէն ղեռ չէ որոշած, թէ որու պիտի սատարէ ընտրութիւններու հնարաւոր երկրորդ փուլին: Այս մասին «Ռիա Նովոսթի»-ին յայտնած է թեկնածուի շտաբէն աղբիւրը:

## Ղարաբաղի Բնակիչները Բախած Են Ամբողջական Շրջափակման, Մինչ Աշխարհը Կեդրոնացած Է Ուրբանիոյ Վրայ. «Freedom House»

Աշխարհի ժողովրդավարական երկիրներէն շատերը կը համարուին՝ ընդդիմանալու Մոսկուայի Ուրբանիա ներխուժման դէմ, սակայն անոնք պէտք է մոռնան, որ այլ, նմանատիպ անարդարութիւններ կը ծաւալին նաեւ այլ վայրերու մէջ, օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի մէջ, կը յայտարարէ «Freedom House»-ը:

«Ժողովրդավարական երկիրները պէտք է ուղղակի մարդասիրական օգնութիւն ցուցաբերեն հակամարտութեան տուժած բնակչութեան՝ անոնց տառապանքը մեղմելու համար», գրած է միջազգային իրաւապաշտպան կազմակերպութեան հայաստանեան ներկայացուցիչ Անդրանիկ Շիրինեանը՝ անոնց կողմէն ընելով ազդելու միջազգային կառույցներու՝ ԵԱՀԿ-ի, ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին վրայ՝ օգնելու իրագործել Լաչինի ապաշրջափակման հարցով Միջազգային Դատարանին որոշումները:

Գործնականի իրեն մէջ նման գործողութիւնները կրնան նաեւ ետ պահել Պաքոյն Հայաստանի

# ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Գնդակը Կրկին ՌԴ-ի Դաշտ Տեղափոխուեց

ԱՐՄԵՆ ՎԱՐՊԱՆԵԱՆ

Ուաշինգթոնի քառօրեայ հայ-ատրպեյճանական բանակցութիւնների արդիւնքում որոշակի փաստաթուղթ չձեւաւորուեց: Վերլուծելով քննարկումների վերաբերեալ տարածուած հաղորդագրութիւնները՝ կարելի է եզրակացնել, որ յստակեցուել են միայն փաստաթղթի ձեւաչափը եւ հիմնական կետերը: Քննարկումների արդիւնքով ՀՀ ԱԳՆ-ի տարածած հաղորդագրութեան մէջ նշուում է, որ «Խաղաղութեան եւ միջպետական յարաբերութիւնների հաստատման մասին» երկրորդ համաձայնագրի նախագծի որոշ յօդուածները շուրջ եղել է փոխմբռնման առաջընթաց, բայց նաեւ արձանագրուել է, որ մի շարք առանցքային հարցերի շուրջ դիրքորոշումները մնում են տարամետ: Ամփոփելով հանդիպման արդիւնքները՝ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Պրինքենը յայտնեց, որ հանդիպումների ժամանակ կողմերը քննարկել են մի շարք կոշտ հարցեր եւ հաստատել են շօշափելի գործընթաց կայուն խաղաղութեան համաձայնագրի շուրջ: Նրա խօսքով՝ խաղաղութեան վերջնական պայմանագիրը պատմական կը լինի եւ դրական ազդեցութիւն կ'ունենայ երկու երկրների համար ու նրանց սահմաններից դուրս:

ԱՄՆ պետքարտուղարը կարծիք է յայտնել, որ Հայաստանը եւ Ատրպեյճանը շատ մօտ են պայմանագրի ստորագրման վերջնագծին՝ ընդունելով, որ մնացել է դժուարագոյն՝ մարտիտի վերջին մղունք: Աւելի ուշ Պրինքենը թուիթերեան էջում գրեց, որ արդիւնքի հնարաւոր է հասնել լրացուցիչ փոխզիջումների միջոցով: Այս յայտարարութիւնը կարող է նշանակել

միայն մէկ բան, որ Ատրպեյճանը լրացուցիչ պահանջներ է ներկայացրել Հայաստանին, քանի որ ՀՀ իշխանութիւնները բազմիցս յայտարարել են, որ ճանաչում են Ատրպեյճանի տարածքային ամբողջականութիւնը: Այլ հարց է, թէ որն է այդ ամբողջականութիւնը: Կարելի է ենթադրել, որ հերթական անգամ հայ-ատրպեյճանական բանակցութիւններում հնարաւոր չեղաւ առաջընթաց արձանագրել ատրպեյճանական կողմի առաւելապաշտական մօտեցումների պատճառով:

Գնդակը Արեւմուտքից կրկին վերադարձաւ ՌԴ դաշտ, քանի որ Մալխոնի նախատեսում է ինչպէս Նիկոլ Փաշինեանի այցը Մոսկուա, այնպէս էլ ԱԳ նախարար Արարատ Միրզոյեանի մասնակցութեամբ եռակողմ հանդիպումը նոյն մայրաքաղաքում: Բանակցութիւնները ընթացքում ԱՄՆ-ից յայտարարութիւններ հնչեցին, թէ պէտք է չանտեսել փաստը, որ խաղաղութիւնը հաստատուել է ՌԴ միջնորդութեամբ եւ Արցախում կանգնած են ուսու խաղաղապահները, բայց այն չի նշանակում, որ հայ-ատրպեյճանական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացը պէտք է լինի ՌԴ-ի մենաշնորհը:

Վերջին յայտարարութիւնը խօսում է այն մասին, որ ԱՄՆ-ում ըմբռնում կայ՝ Հարաւային Կովկասում իրավիճակը կարգաւորելու հարցում պէտք է ոչ թէ մրցակցել Մոսկուայի հետ, այլ համագործակցել: Այս տեսանկիւնից էլ գնդակը Ռուսաստանի դաշտում է՝ կ'ընդունի՝ ԱՄՆ-ի համագործակցութեան առաջարկը, որը կարգաւորման միակ արդիւնաւետ ուղին է:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

## «Աննախադէպութիւնը» Զեմ Տեսնում

ԱՐԱՍ ԱՐԱՐԱՍԵԱՆ

«Լրագրողներ Առանց Սահմանների» կազմակերպութեան կազմած «մամուլի ազատութեան ինդեքս-2023-ում Հայաստանը 180 երկրների թւում զբաղեցրել է 49-րդ «պատուաւոր» տեղը՝ բարելաւելով իր ցուցանիշը երկու կէտով եւ զգալիօրէն առաջ անցնելով տարածաշրջանի բոլոր երկրներին:

Ինչպէս է չափուում մամուլի ազատութեան մակարդակը՝ չգիտեմ: Զուտ «աչքաչափով», իհարկէ, պարզ է, որ ինչպէս 2018 թուականից առաջ, այդպէս էլ հիմա, վիճակը մեր երկրում աւելի բարոճ է, քան Ազրբեյջանում, Թուրքիայում եւ Իրանում: «Աննախադէպ առաջընթաց» եւ, ճիշտն ասած, չեմ տեսնում՝ չնայած, իհարկէ, լրատուամիջոցների սփռման հնարաւորութիւնները մեծանում են, եւ համացանցի շնորհիւ, օրինակ, հեռուստաընկերութեան եթերազրկումն այլեւս դրամատիկ հետեւանքներ չի ունենում:

Ինչպե՞ս են կազմուում նման գեկոյցները: Ենթադրում եմ, որ գեկոյց գրող կազմակերպութիւնն ուղարկում է իր ներկայացուցիչներին, վերջիններս հանդիպում են հայաստանեան այն հ/կ-ներին եւ լրատուամիջոցներին, որոնց հետ համագործակցում են, եւ կախուած նրանից, թէ ինչ տեղեկութիւններ են նրանց յայտնում, կազմում են իրենց գեկոյցները:

Հայաստանեան պաշտօնական քարոզչութիւնը գործը ներկայացնում է այնպէս, որ, այո, «աննախադէպ յաջողութիւններ» ենք հասել, եւ միակ խնդիրն այն է, թէ պէտք է գտնուեն օրինական միջոցներ՝ ապատեղեկատուութեան դէմ պայքարելու համար: «Թարգմանաբար» դա նշանակում է՝ ինչպէ՞ս անենք, որ մեր՝ իշխանաւորներին,

խաթրին ոչ ոք չկարողանայ կպնել: Կարծում եմ, այս հարցում իշխանաւորներն առանձնապէս անհանգստանալու տեղ չունեն, որովհետեւ ինչպէս «նախկինների» ժամանակ, այնպէս էլ հիմա դատարանները նրանց զրպանում են: Երեւանի փաստացի քաղաքապետ Տիգրան Աւինեանը դատի է տուել լրագրող Դաւիթ Սարգսեանին՝ իր պատիւն, արժանապատուութիւնը եւ գործարար համբաւն արատաւորելու համար: Ի դէպ, չեմ հասկանում, թէ ինչու է նման դէպքերում նշուում «գործարար համբաւը»: Աւինեանը, որ քան զիտեմ, պետական պաշտօնեայ է, ոչ թէ գործարար: Յամենայնդէպս՝ պաշտօնապէս:

Արատաւորե՞լ է լրագրողը պաշտօնեայի գործարար համբաւը, թէ՞ ոչ՞ դա դեռ պէտք է պարզել: Բայց, որպէս հայցի ապահովման միջոց, դատարանն արդէն իսկ որոշել է պատժել Սարգսեանին եւ նրա հաշուի ու անշարժ գոյքի նկատմամբ արգելաւոր է դրել: Այսինքն, եթէ լրագրողն աշխատավարձ չստանայ, այդ գործի քննութիւնը, հաւանաբար, աւելի արդիւնաւետ կ'ընթանայ: Զգիտեմ, նման գործերն արդե՞օք յայտնի են դառնում «Լրագրողներ Առանց Սահմանների» կազմակերպութեանը:

1999 թուականին փակուել էր «Մոլորակ» թերթը: Դատարանի որոշմամբ: Միխայիլ Բաղդասարովի գործարար համբաւը պաշտպանելու նպատակով: Հետեւաբար, այն, ինչ տեղի է ունենում հիմա, աննախադէպ չէ, վերջին 30 տարում նախադէպեր շատ են աղել: «ԱՌԱԻՕՏ»

## Խմորումներ Արցախում. Տեսարաններ, Թէ՛ Լուծումներ Արցախեան Հանրութեանը

ՅԱԿՈԲ ԲԱՐԱՆԵԱՆ

Արցախի տարածքային կառավարման նախկին նախարար Հայկ Խանումեանը ֆէյսպուքեան զրառում է արել Արցախի պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Բաբայեանին պետնախարարի պաշտօնում նշանակելու անհրաժեշտութեան վերաբերեալ, ասելով, որ Պապայեանը խորհրդարանում մեծութեամբ երկրորդ ուժի՝ «Միասնական Հայրենիք» կուսակցութեան ղեկավարն է, վայելում է նրա պատգամաւորների աջակցութիւնը: «Ակնյայտ է, որ նախագահի վրայ այս պահին ճնշում կայ Բակո Սահակեանի եւ Արկաղի Ղուկասեանի ու նրանց խմբակիցների կողմից՝ Սամուէլ Բաբայեանին չնշանակելու պահանջով: Հետեւաբար երկուշաբթի օրուայ հանրահաւաքով հանրութիւնն աւելի մեծ ճնշում պէտք է գործադրի նախագահի վրայ՝ գործել քաղաքական տրամաբանութեամբ, գործադիրի ղեկը տալ մարդու, ով պատրաստ է պատասխանատուութիւն ստանձնել երկրի համար այս ծանր ժամանակահատուածում», գրում է Խանումեանը: Նրա զրառումը խօսում է Արցախում այսպէս ասած ներքաղաքական ակտիւ խմորումների մասին, որոնք թւում է

թէ կանգ էին առել այն փուլից յետոյ, երբ խմորումներ ծաւալուեցին Ռուբէն Վարդանեանին պետնախարարի պաշտօնից հեռացնելու առնչութեամբ:

Այժմ խմորումներ են Սամուէլ Բաբայեանին նշանակելու թեմայով եւ այն, որ Հայկ Խանումեանը բաց կերպով ազդարարում է նախկին նախագահին Բակո Սահակեանի եւ Արկաղի Ղուկասեանի թիմերի հակազդեցութեան մասին, յուշում է, որ արցախեան մասշտաբով՝ խմորումները կարծես թէ բաւականին թէժ են: Այլ պարագայում, հազիւ թէ նախաձեռնուէ հանրահաւաքային պահանջի գործողութիւն, այն էլ մի ժամանակաշրջանում, երբ Արցախում տեղի ունեցող բոլոր գործողութիւնները թերեւս պէտք է միտուած լինեն մէկ նպատակի՝ առկայ բոլոր նիւթական եւ մարդկային ռեսուրսները առաւելագոյն մղել լիզացիա արժէք ստեղծելու գաղափարի շուրջ, որովհետեւ շրջափակման մէջ գտնուող Արցախի համար սա այլեւս կենսական բացարձակ անհրաժեշտութիւն է: Միեւնոյն ժամանակ անկասկած է, որ հենց այդ նշանաբանով են սեփական քաղաքական եւ այլ ծրագրերը առաջ մղելու կամ պահպանելու համար պայքարում բոլոր քաղաքական դե-

րակատարները: Բոլորն էլ իրենց դիրքորոշումը եւ քայլերը պայմանաւորում են յանուն շրջափակուած Արցախի: Բայց, փաստացի ստացում է, որ յանուն շրջափակուած Արցախի եւ խնդիրների լուծման՝ հնարաւոր չէ գալ գոնէ առանցքային հարցերում պայմանաւորութեան վերաբերեալ, ձեւաւորելով կառավարման կոալիցիոն տրամաբանութեամբ մեխանիզմ եւ փորձելով դնել եւ լուծել կոնկրետ խնդիրներ:

Միւս կողմից, եթէ կան պետնախարարի բարդագոյն կարգավիճակը ստանձնելու եւ առկայ ծանրագոյն իրողութիւններում հական լուծումներ առաջարկելու պատրաստ գործիչներ, դիցուք՝ Սամուէլ Բաբայեանը, ապա թերեւս պէտք է առնուազն դիտարկել այդ պատրաստակամութիւնը, միեւնոյն ժամանակ սակայն դիտարկել միանգամայն չափելի «նախապաշտօնական» հանրային պատասխանատուութեան «բարոմետրով»: Այսինքն, եթէ որեւէ գործիչ պէտք է նշանակուի բարձրագոյն որեւէ պաշտօնի, ապա՝ դրա համար կամ անձնապէս պատասխանատու է նշանակողը՝ հանրութեան առաջ, կամ նշանակուողը հանրութեան առաջ

Շար.ը էջ 6



**ՄԱՍԻՍ**  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

---

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ԼՈՒՐԵՐ

Վարչապետ Փաշինեան Զանդիպած Է Արտախորհրդարանական Քաղաքական Ուժերու Ղեկավարներուն



Վարչապետ Նիկոլ Փաշինեանի հանդիպումը արտախորհրդարանական քաղաքական ուժերուն հետ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան կառավարութեան մէջ հանդիպած է արտախորհրդարանական քաղաքական ուժերուն հետ համագործակցութեան խորհրդակցական ժողովի մասնակից կուսակցութիւններու ղեկավարներուն:

Հանդիպման մասնակցած են «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանը,

Հայաստանի Քրիստոնէա-ժողովրդավարական կուսակցութեան նախագահ Լեւոն Շիրինեանը, «Միասնական Հայրենիք» կուսակցութեան նախագահ Մհեր Տէրտէրեանը, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի վարչութեան ատենապետ Սեդրակ Աճեմեանը, «Ուժը Հայրենեաց» կուսակցութեան նախագահ Տիգրան Արզաքանցեանը:

Վերջին Զինգ Տարուան Ընթացքին Շուրջ 40 Տոկոսով Աւելցած Է 5 Եւ Աւելի Երեխայ Ունեցողներուն Թիւը



ՄԱԿ-ի Բնակչութեան հիմնադրամի հայաստանեան գրասենեակի մամուլի ասուլիսը

Մայիս 15-ը կը նշուի որպէս Ընտանիքի միջազգային օր: ՄԱԿ-ը այն առաջին անգամ նշած է 1994 թուականին: Օրը աւելի է անգամ մը եւս անդրադառնալու ընտանիքներու բարեկեցութեան ապահովման ու ամրապնդման ուղղուած ծրագիրներուն, առկայ մարտահրաւերներուն: ՄԱԿ-ի Բնակչութեան հիմնադրամի հայաստանեան գրասենեակի հասարակայնութեան հետ կապերու համակարգող Մհեր Մանուկեան նշեց, որ այս տարուան թեման է «Աշխարհի մէջ ժողովրդագրական գործօններու ազդեցութիւնը ընտանիքներուն վրայ»:

«Այս ազդեցութեանը պէտք է մի քանի կէտով անդարդառնալ: Նախ ծնելիութիւնը, որն ամբողջ աշխարհում անկում է ապրում: Աշխարհի բնակչութեան 2/3-րդն ապրում է այնպիսի տարածքներում, որտեղ ծնելիութեան գործակիցը պարզ վերարտադրողական

ցուցանիշից՝ 2,1-ից, ցածր է», ըսաւ Մհեր Մանուկեան:

Խօսելով հայաստանեան միտումներէն՝ Մհեր Մանուկեան նշեց, որ շատ ընտանիքներ կը փափաքին 3 եւ աւելի երեխաներ ունենալ, բայց իրականութեան մէջ 1 կամ 2 հատ կ'ունենան տարբեր խոչընդոտներու պատճառով: Նախընտրելի է, որ անհրաժեշտ պայմանները բարելաւուին, որ ընտանիքներուն մէջ ծնին երեք եւ աւելի երեխաներ: Եւ այդ պէտք է ըլլայ միայն իւրաքանչիւր երեխային գումար յատկացնելով: Երկարաժամկէտ հեռանկարի համար նախընտրելի է համալիր մօտեցում:

Պետութեան կողմէ երեխաներու ծննդեան առնչութեամբ շարք մը աջակցման ծրագիրներ կ'իրականացուին՝ ուղղուած ընտանիքներուն: Մինչեւ երեխայի ծնիլը պետութիւնը կը վճարէ մայրութեան նպաստ ինչպէս աշխատող, այնպէս ալ չաշխատող մայրերուն:

Այսօր Արցախը Երեւի Աշխարհի Ամենաանկախ Պետութիւնն Է. Անդրանիկ Քոչարեան

Չնայած Պրիւքսէլի մէջ բարձր մակարդակով հնչած յայտարարութեան, որ Հայաստանն ու Ատրպէյճանը կը ճանչնան միմեանց տարածքային ամբողջականութիւնը, խորհրդարանի Պաշտպանութեան Յանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Քոչարեան կը պնդէ, որ Արցախը այսօր աշխարհի ամենաանկախ պետութիւնն է՝ գոնէ յառաջիկայ տարիներու կտրուածքով:

«Արցախն ի՞նչ է տեղաշարժուել է, Արցախը գտնուում է այնտեղ, ինչպէս միշտ գտնուել է: Հայաստանը միշտ ճանաչել է Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, բոլոր բանակցութիւններում եւ հիմա էլ, բայց Արցախն ունի իր սեփական տարածքը եւ կարգավիճակը: Այսօր Արցախը, երեւի, աշխարհի ամենաանկախ պետութիւնն է, մօտակա 3-4 տարիներին, յետոյ կը տեսնենք», ըսաւ Անդրանիկ Քոչարեանը:

Հարցումին՝ «Իսկ հիմա Արցախը մե՞րն է», Պաշտպանութեան Յանձնաժողովի նախագահը պատասխանեց. «Ի՞նչ է նշանակում մերն է, մերն է, քանի մեր ժողովուրդն այնտեղ ապրում է, երբ որ չապրի, այն ժամանակ արդէն դժուար է ասել՝ ումն է Արցախը: Մենք պէտք է արձանագրենք, որ գնում են բանակցութիւններ, վերջում, երբ որ կը հրապարակուի ամբողջ բանակցութիւնների տրամաբանութիւնը եւ քայլերի յաջողականութիւնը, այն ժամանակ մենք կ'արձանագրենք, թէ ինչն է արձա-



Խորհրդարանի Պաշտպանութեան Յանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Քոչարեան

նագրելու, ինչը՝ ոչ: Այսօր պէտք է արձանագրենք, որ Ատրպէյճանը պէտք է ճանաչի Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը, մենք էլ՝ իրենց, բայց այնտեղ գտնուում է նաեւ Լեւոնային Ղարաբաղը, որն իր կեանքը կառուցել է՝ ելնելով իր հռչակած չափորոշիչներով»:

Արդեօք Ատրպէյճանը ճանչնալով Հայաստանի 29 հազար 800 քառակուսի քիլոմէթրը, ետ պիտի երթայ Հայաստանի բռնազրուած տարածքներէն: Պաշտպանութեան Յանձնաժողովի նախագահը յստակ պատասխան չտուապ՝ միայն ընդգծելով, թէ ինք համոզմունք ունի Հայաստանի Զինուած Ուժերու ապագային նկատմամբ:

Վահագն Վերմիշեանը Դատապարտուեցաւ Ութ Տարուան Բանտարկութեան

Հայաստանի Քաղաքաշինութեան Կոմիտէի նախկին նախագահ Վահագն Վերմիշեանը դատապարտուած է 8 տարուայ բանտարկութեան:

Վերմիշեանի փաստաբան Ալեքսանտր Գոշուպաեւը ֆէյսպուքեան իր էջով գրած է, որ դատավճիռը պիտի բողոքարկեն վերաքննիչ Դատարանին մէջ: Կալանքի որոշումն ալ որակելով ապօրինի՝ փաստաբանը նշած է, որ այդ որոշման դէմ ալ գանգատ պիտի ներկայացնեն Եւրոպական Դատարան:

2020-ի փետրուարին Վերմիշեան ազատուեցաւ Քաղաքաշինութեան Կոմիտէի նախագահի պաշտօնէն, որ կը զբաղեցնէր 2019-ի Մարտէն: Մինչ պաշտօնէն ազատիլը ան ձերբակալուած էր առանձնապէս մեծ չափի կաշառք



Քաղաքաշինութեան Կոմիտէի նախկին նախագահ Վահագն Վերմիշեան

ստանալու համար, ապա կալանաւորուած էր:

Երեխան ծնելու պարագային եւս կը սահմանուի նպաստ: Առաջին եւ երկրորդ երեխայի պարագային կը վճարուի 300 հազար դրամ, 3-րդ եւ 4-րդ երեխայի պարագային՝ 1 միլիոն դրամ, 5-րդ եւ յաջորդ երեխային պարագային՝ 1,5 միլիոն դրամ: Յաջորդ փուլին նախատեսուած է երեխայի խնամքի նպաստ մինչեւ երեխայի 2 տարին լրանալը: Որքանով այս ծրագիրները իրենց ազդեցութիւնը կը թողեն ծնելիութեան վրայ:


«Ոչ մի առանձին ծրագիր չի կարող ազդեցութիւն ունենալ այնպիսի բազմազործօն երեւոյթի վրայ, ինչպիսին ծնելիութիւնն է: Այստեղ համալիր մօտեցում է անհրաժեշտ: Այդուհանդերձ, վերջին տա-

րիներին կայունացել է ծնելիութեան նուազման միտումը: Դա դրական կարող ենք համարել: Կարծում եմ, որ յաջորդ միջոցառումների փունջն արդէն պէտք է ուղղուած լինի այդ ցուցանիշն աւելացնելուն», ըսաւ ՀՀ Աշխատանքի եւ Ընկերային Հարցերու նախարարութեան Կենսաթոշակային Ապահովութեան եւ այլ Դրամական Վճարներու Վարչութեան պետ Անահիտ Գալստեանը:

Անոր խօսքով՝ վերջին տարիներուն իսկապէս նկատուելի է, որ 3-էն աւելի երեխայ ունեցող ընտանիքներուն թիւը աւելցած է: Վերջին հինգ տարուան մէջ շուրջ 40 տոկոսով աւելցած է 5 եւ աւելի երեխայ ունեցողներուն թիւը:

# ԼՈՒՐԵՐ

## Պատժամիջոցները ՀՀ Կարմիր Գիծն ԵՆ ԵՎ Այդ Շատ Յատակ Կ'ըսենք Ռուսաստանին. Փաշինեան



Ռւքրանիոյ իրադարձութիւններէն յետոյ բեռնափոխադրումներու լոկիսթիք շղթաները պատուուած են կամ չեն գործեր: Շատ ապրանքներ, որոնք ուղղակիօրէն կը մատակարարուէին Ռուսիա, այժմ այնտեղ կ'երթան Հայաստանի, Ղազախստանի եւ այլ երկիրներու միջոցով: Չեխական «Respekt» ամսագրին տուած հարցազրոյցին աչա մասին ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ անդրադառնալով Ռուսիոյ դէմ կիրառուած պատժամիջոցներու հարցին՝ Հայաստանէն Ռուսիա արտահանման աճի առումով:

«Օրինակ՝ խմիչքները, որոնք ենթակաջ չեն պատժամիջոցներին, խնդիր չեն: Մինչեւ 2022 թուականի Փետրուարը նրանք գնում էին Լեհաստանով ու Պելառուսիայով, հիմա գնում են Հայաստանով: Խօսքը միայն երթուղիների փոփոխութեան մասին չէ, եւրոպական փոխադրողների մեծ մասը հրաժարուած է ուղղակիօրէն համադրուածակցել ռուսական շուկայի հետ: Իսկ ռուսական փոխադրողները չեն կարող դրանք հասցնել Լեհաստան: Այսպիսով, ստեղծուեցին բոլորովին նոր լոկիսթիք երթուղիներ, այդ թւում՝ նաեւ Հայաստանի տարածքով: Բայց պատժամիջոցի տակ գտնուող ապրանքների մասով փորձուած ենք հնարաւորինս թափանցիկ լինել, համադրուածակցում ենք ԵՄ-ի, ԱՄՆ-ի եւ նոյնիսկ հինգ Ռուսաստանի հետ: Մենք ԵԱՏՄ անդամ ենք եւ շատ սերտ տնտեսական կապեր ունենք Ռուսաստանի հետ եւ հայկական առեւտուրը սիրում է մասնակցել այն ծրագրերին, որոնք ստեղծուել են վերջին շրջանում:

Այնտեղ, որտեղ ազատ տեղ կայ, մենք ուրախութեամբ բաւարարում ենք ռուսական պահանջարկը: Պատժամիջոցները մեր կարմիր գիծն են: Եւ մենք դա շատ յստակ ասում ենք ռուսներին. մենք չենք ուզում ձեզ վնասել, բայց մենք չենք կարող մեզ թոյլ տալ ինքներս յայտնուել պատժամիջոցների տակ: Այստեղ ոչ մի գաղտնիք չկայ», նշած է Փաշինեան:

«Հետաքննութեան ընթացքին պարզուած է, որ ԱՏՄ-ն չի հայկական յանձնարարութեամբ նաեւ այլ սաղորիչ գործողութիւններ իրականացուցած է Ատրպէյճանի դէմ», կը յայտարարէ Ատրպէյճանի պետական անվտանգութեան ծառայութիւնը:

### Ատրպէյճանը Երկու Աճ Զերբակալած Է Հայաստանի Յատուկ Ծառայութիւններուն Համար Աշխատելու Սեղադրանքով

«Չեռանարկուած միջոցառումներուն բերումով կալանաւորուած եւ քրէական պատասխանատուութեան ենթարկուած է 1980 թուականի ծնունդ Ռաշատ ԱՏՄ-նովը, որ կը կասկածուի պետական դաւաճանութեան եւ մեր երկրին դէմ ահաբեկչական սաղորանք իրականացնելու մէջ: ԱՏՄ-նովը ապրած է երրորդ երկրի տարածքի մէջ եւ կատարած է հայկական յատուկ ծառայութիւններու առաջադրանքները», կ'ըսուի հաղորդագրութեան մէջ:

Ըստ հաղորդագրութեան, Հայաստանի յատուկ ծառայութիւններու առաջադրանքները կատարելու համար ԱՏՄ-նովը ներգրաւած է 1991 թուականի ծնունդ Ռոմիլ շան Ամիրովը եւ շարք մը այլ անձեր, որոնք տեսանիւթեր պատրաստած են Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան դէմ կոչով, գանոնք տարածած են Youtube-ով:

«Ֆերատեսչութիւնը կը նշէ, որ ԱՏՄ-նովի եւ Ամիրովի նկատմամբ խափանման միջոց կիրառուած է կալանաւորումը: ԱՏՄ-նովը կը մեղադրուի դաւաճանութեան, ահաբեկչութիւն նախապատրաստելու, օտարերկրեայ կազմակերպութիւններու հրահանգով պետութեան դէմ կոչ ընելու, Ամիրովը՝ դաւաճանութեան եւ օտարերկրեայ կազմակերպութիւններու ցուցումով պետութեան դէմ կոչ ընելու մէջ:


## Մենք Չենք Ստանար Այն Սպառազինութիւնը, Ինչ Պատուիրած Եւ Ինչի Համար Վճարած Ենք Ռուսիոյ. Ան Քարտուղար Արմէն Գրիգորեան

«Մենք ՀԱՊԿ-ից ակնկալում էինք, որ այն կը գործի անցեալ տարուայ Սեպտեմբերին՝ հայկական տարածքում Ատրպէյճանի ուղղակի յարձակման ժամանակ: Այն չգործեց»: Այս մասին ըսած է ՀՀ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը:

Լրագրողի հարցումին, թէ քննարկուած է ՀԱՊԿ-էն դուրս գալու հարց, Արմէն Գրիգորեանը պատասխանած է. «Ճիշդն ասած, այո՛, նման քննարկումներ եղել են, սա բնական արձագանգ է»:

Արմէն Գրիգորեանի խօսքով՝ այն մեխանիզմները, որոնք պէտք է ապահովէին Հայաստանի անվտանգութիւնը, փլուզուած են, նորերը չեն ստեղծուած: Սա ճգնաժամ է:

Թէ ինչ պէտք է այդ պարագային ընէ Հայաստանը, Արմէն Գրիգորեանը պատասխանած է. «Փնտուել սպառազինութեան նոր



ՀՀ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան

մեխանիզմներ եւ մատակարարումներ, որովհետեւ առարկայականօրէն մենք չենք ստանում այն, ինչ պատուիրել եւ ինչի համար վճարել ենք Ռուսաստանին»:

## Արցախի Նախագահը Հանրահաւաքի Ներկայացուցիչներուն Առաջարկած Է Ակսիլ Անոնց Ծրագիրներուն Շուրջ Քննարկումներ

Մայիս 15-ին Ստեփանակերտի մէջ կայացած հանրահաւաքի մասնակիցներուն անունով հրապարակուած է յայտարարութիւն, որուն մէջ մտահոգութիւն յայտնելով Արցախի մէջ եւ անոր շուրջ ստեղծուած ռազմաքաղաքական, ընկերա-տնտեսական եւ բարոյահոգեբանական իրավիճակին առնչութեամբ, եւ ընդունելի համարելով ստեղծուած իրավիճակէն՝ խորհրդարանական երկրորդ ուժի՝ «Միասնական Հայրենիք» կուսակցութեան նախագահ Սամուէլ Բաբայանի ելքի տեսլականը, Արցախի Հանրապետութեան նախագահին պահանջ ներկայացուած է Բաբայանը նշանակել պետական նախարարի պաշտօնին՝ օժտելով համարժէք լիազօրութիւններով՝ ըստ «Ռազմական դրութեան մասին» օրէնքի իրաւակարգաւորումներուն:



Արցախի Նախագահ Արայիկ Յարութիւնեան

Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնը Ստեփանակերտի մէջ կայացած հաւաքի ներկայացուցիչներուն առաջարկած է Մայիս սկսիլ քննարկումներ ու խորհրդակցութիւններ անոնց կողմէ ներկայացուած առաջարկներուն ու ծրագիրներուն շուրջ: Արցախի նախագահը այս մասին տեղեկացուցած է Ֆէյսպուքի իր էջի գրառմամբ:

«Այսօր Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահի կողմից ինձ է փոխանցուել Ստեփանակերտի վերածննդի հրապարակում տեղի ունեցած հաւաքի մասնակիցների յայտարարութիւնը:

Ելնելով ԱՀ Սահմանադրութեամբ իմ ստանձնած պարտաւորութիւններից ու լիազօրութիւններից, հաւաքին մասնակցած մեր քաղաքացիների նկատմամբ յար-

գանքից, հաշուի առնելով լսուած լինելու նրանց իրաւունքը՝ որոշել եմ ընդառաջ քայլ կատարել: Ուստի, հաւաքի ներկայացուցիչներին առաջարկել եմ վաղուանից սկսել քննարկումներ ու խորհրդակցութիւններ նրանց կողմից ներկայացուած առաջարկների ու ծրագրերի շուրջ:

Ինչպէս նախկինում, այնպէս էլ հիմա պատրաստ եմ օգտագործել իւրաքանչիւրի գիտելիքները եւ փորձը՝ ի նպաստ մեր երկրի անվտանգութեան, խաղաղութեան եւ մեր ժողովրդի բարօրութեան:

Միաժամանակ ընդգծում եմ, որ յատկապէս այս ճգնաժամային պայմաններում մենք պարտաւոր ենք ցուցաբերել զսպուածութիւն, խոհեմութիւն եւ պատասխանատուութիւն՝ առաջնորդուելով բացառապէս Արցախի Հանրապետութեան ու մեր ժողովրդի շահերով», նշած է Արցախի նախագահը:

### Նենսի Փելոսիի Ռանդիպաժ Է Հայաստան-ԱՄՆ Բարեկամական Խումբի Անդամներուն Հետ



Նենսի Փելոսի կը հանդիպի Հայաստան-ԱՄՆ Բարեկամական Խումբի անդամներուն հետ

2023 թուականի Մայիս 10-ին ՀՀ Ազգային Ժողովի Հայաստան-ԱՄՆ բարեկամական խումբի անդամները՝ բարեկամական խումբի ղեկավար, ԱԺ «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորեանը, ԱԺ Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանեանը, ԱԺ պատգամաւորներ Վահագն Ալեքսանեանը, Հովհաննէս Գրիգորեանը, Իրինա Գասպարեանը, ԱՄՆ-ի մէջ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Լիլիթ Մակունցը, Ուաշինգթոնի մէջ Հանդիպած են ԱՄՆ Գոնկրէսի Ներկայացուցիչներու Պալատի նախկին խօսնակ, գոնկրէսական Նենսի Փելոսիին, Գոնկրէսի Հայկական Հարցերով Յանձնախումբի համանախագահ Ֆրենք Փրլլոնին, Ներկայացուցիչներու Պալատի անդամներ Ռոպ Մենենտեսին, Տեպի Տինկլին եւ Ճեն Շչեքովսքիին:

Ներկայացուցիչներու Պալատի նախկին խօսնակ Նենսի Փելոսին ջերմութեամբ չի շնորհակալուի Հայաստանի կատարած իր այցը՝ վերահաստատելով իրենց աջակցութիւնը Հայաստանի ժողովրդավարութեան, ինքնիշխանութեան ու տարածքային ամբողջականութեան:

Հայաստան-ԱՄՆ բարեկամական խումբի ղեկավար Հայկ Կոնջորեանը հանդիպման ժամանակ

կարեւորած է Հայաստանի Հանրապետութեան եւ ԱՄՆ-ի միջեւ առկայ ռազմավարական երկխօսութիւնը, ընդգծած ԱՄՆ օժանդակութիւնը Հայաստանի մէջ իրականացուող ժողովրդավարական բարեփոխումներուն:

Կողմերը փոխադարձաբար ընդգծած են միջխորհրդարանական համագործակցութեան առկայ բարձր մակարդակը եւ պայմանաւորուած են շարունակել քաղաքական խորհրդակցութիւնները եւ փոխադարձ այցերը:

Հանդիպման ընթացքին քննարկուած է Հայաստանի շուրջ առկայ անվտանգային իրավիճակը, Լազինի միջանցքի ապօրինի շրջափակումը, ինչպէս նաեւ Ատրպէյճանի հետ ընթացող խաղաղութեան գործընթացը, առկայ մարտահրաւէրներն ու անոնց լուծման ուղիները:

Հայ խորհրդարանականները ընդգծած են, որ Հայաստանը հաւատարիմ է խաղաղութեան օրակարգին, որուն նպատակն է տարածաշրջանին մէջ կայուն եւ երկարատեւ խաղաղութեան հաստատումը:

Ներկայացուցիչներու Պալատի գործընկերները վերահաստատած են իրենց պատրաստակամութիւնը՝ հետագային եւս աջակցելու Հայաստանի Հանրապետութեան տարբեր ձեւաչափերով:

### Փայլանի Համոզմամբ, Էրտողան Ընտրութիւններու Երկրորդ Փուլին Պիտի Յաղթ

Թուրքիոյ նախկին խորհրդարանի հայազգի պատգամաւոր Կարո Փայլանի համոզմամբ, Թուրքիոյ գործող նախագահ Ռեճեպ Էրտողան Մայիս 28-ին կայանալիք նախագահական ընտրութիւններու երկրորդ փուլին պիտի յաղթէ:


Սա լաւ լուր է հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման տեսանկիւնէն, «Ազատութեան» հետ զրոյցին ըսաւ Փայլան:

«Ազատութիւն».- Առաջին փուլին յետոյ ինչպէ՞ս կը գնահատէք ընդդիմութեան յաղթանակի հնարաւորութիւնը՝ երկրորդ փուլին նախագահի թեկնածուին յաղթելու հնարաւորութիւնը:

Փայլան.- Առաջին փուլին, դժբախտաբար, Էրտողանը քուէներուն 49 տոկոսը ստացաւ, Քըլլըչտարօղլուն 45 տոկոսը ստացաւ: Այսօրուան դրութեամբ Էրտողանը աւելի շատ հաւանականութիւն ունի երկրորդ փուլը յաղթելու, եւ երկրորդ՝ Էրտողանը շահեցաւ խորհրդարանին մեծամասնութիւնը, անոր համար ալ մեծ հաւանականութիւն ունի: Մեզի համար, դժբախտաբար, կը կարծեմ, Էրտողանը անշուշտ երկրորդ փուլը պիտի շահի:

«Ազատութիւն».- Այդ ինչպէ՞ս պիտի ազդէ հայ-թրքական կարգաւորման գործընթացին վրայ:

Փայլան.- Դժբախտաբար, հիմա աւելի ազգայնական խորհրդարան պիտի ըլլայ եւ շատ աւելի ազգայնական իշխանութիւն պիտի ըլլայ, սա լաւ լուր է հայ-թրքական յարաբերութիւններուն համար: Թուրքիա-Ատրպէյճան յարաբերութիւնները հիմա ազգայնականութեան խօսակցութեան շուրջ են, սա լաւ լուր է՝ աւելի ազգայնական խորհրդարան, աւելի ազգայնական իշխանութիւն: Ես յոյս ունեմ, որ հայ-թրքական սահմանը կրնայ բացուիլ գալիք ամիսներուն կամ շաբաթներուն ընթացքին, բայց անոնք նոյնիսկ օդանաւերու ճանապարհը փակեցին, հիմա դժբախտաբար այդ յոյսը չունիմ, բայց խաղաղութեան պայքարը ես պէտք է շարունակեմ Թուրքիոյ մէջ, որպէսզի



Թուրքիոյ նախկին խորհրդարանի հայազգի պատգամաւոր Կարո Փայլան

համոզեմք Էրտողանի իշխանութիւնն ու խորհրդարանը:

«Ազատութիւն».- Պարոն Փայլան, դուք այլեւս նոր խորհրդարանին մէջ պիտի չըլլաք, դուք պատգամաւոր չէք, ինչո՞վ ստադիո էք զբաղիլ:

Փայլան.- Ես աքթիւսիս եմ մարդու իրաւունքներու հարցերով, եւ հիմա, եթէ ազատ ըլլամ, այս պայքարը պիտի շարունակեմ: Հիմա ամէն ինչ աւելի դժուար պէտք է ըլլայ՝ Հայոց Յեղափոխութեան մասին խօսիլն ալ, հայերուն պահանջներուն մասին խօսիլն ալ, հայ-թրքական յարաբերութիւններու մասին խօսիլն ալ: Մեզի համար ամէն ինչ աւելի դժուար պիտի ըլլայ, բայց պայքարը պէտք է շարունակենք, եթէ պայքարը շարունակենք, յոյս կայ:

«Ազատութիւն».- Դուք ձեր անվտանգութեան համար մտաւախութիւն ունի՞ք, կը կորսնցնէք պատգամաւորի կարգավիճակը:

Փայլան.- Անշուշտ, ինձի համար ալ մտահոգ եմ, բայց ես անոր իրաւունքը չունիմ, ես Թուրքիոյ հայերուն համար, Թուրքիոյ հայ ժողովուրդին համար մտահոգ եմ, այդ տեսակ ազգայնական շրջանի մէջ ամէն ինչ աւելի դժուար պիտի ըլլայ, յատկապէս անոնց համար, որոնք կը հաւատան ժողովրդավարութեան, ինձի համար ալ ամէն ինչ աւելի դժուար պիտի ըլլայ:

### Իտալիոյ Մէջ Առգրաւուած Է Աւելի Քան 2 Թոն Քոքային, Որ Պէտք Է Տեղափոխուի Հայաստան



Իտալիոյ ֆինանսական ոստիկանութիւնը եւ մաքսաւորները յայտարարած են, որ աւելի քան 2,7 թոն բարձր մաքրութեան քոքային առգրաւած են ճոյս թափուրօ նաւահանգիստին մէջ:

Ըստ ANSA գործակալութեան՝

Թմրանիւթը թաքցուած է 78 թոն պանան տեղափոխող սառնարանային երկու բեռնարկի մէջ: Բեռը յայտնաբերուած է էքոլատորէն ժամանած նաւի վրայ եւ վրացական Պաթոմի նաւահանգիստով պէտք է տեղափոխուի Հայաստան:

### Թուրքիոյ Խորհրդարանի Հայ Նոր Անդամը Տօքթ. Սեւան Ավաճըլօղլու

Իսթանպուլահայ համայնքը դարձեալ երեսփոխան մը ունի Թուրքիոյ Խորհրդարանին մէջ: Նախորդ շրջանին աթոռ ունեցած էին Մարգար Եսայեան, Սելինա Տողան եւ Կարո Փայլան:

Այս անգամ իշխող Ա. Քէ. Փէ. կուսակցութեան անունով Տօքթ. Սեւան Ավաճըլօղլուն ընտրուեցաւ երեսփոխան:

Տօքթ. Ավաճըլօղլու Իսթանպուլի երկրորդ ընտրաշրջանին, առաջադրուած էր: Այս շրջանին մէջ 27 երեսփոխան ընտրուեցան: Տօքթ. Սեւան Գրդ համարի տակ էր, ընտրուեցաւ եւ մաս կազմեց նորընտիր խորհրդարանին: Ան մաս կը կազմէ իշխող Ա. Ք. կուսակցութեան շարքերուն եւ փոքրամասնական հաւաքականութիւններուն մաս-



Թուրքիոյ Խորհրդարանի նորընտիր հայազգի անդամ Տօքթ. Սեւան Ավաճըլօղլու

նակից միակ երեսփոխանը պիտի ըլլայ:

### Պրիքստի Մեջ Կայացաւ

Շարունակուած էջ 1-էն

րուն միջեւ խաղաղութեան համապարփակ համաձայնագրի ստորագրման ուղղութեամբ:

Կողմերը քննարկած են սահմանազատման գործընթացին մէջ արձանագրուած յառաջընթացը, այս ծիրին մէջ անոնք պայմանաւորուած են վերսկսել սահմանային հարցերու շուրջ երկկողմ հանդիպումները:

Հայաստանի եւ Ատրպէյճանի առաջնորդները հաւատարմութիւն յայտնած են Ալմա-աթայի 1991 թուականի հռչակագրին եւ Հայաստանի ու Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան: Այս անգամ Շարլ Միշէլը յստակ նշած է երկու երկիրներուն տարածքը՝ Հայաստանի 29 հազար 800 եւ Ատրպէյճանի 86 հազար 600 քառակուսի քիլոմէթրը:

Սահմանազատման հետ կապուած վերջնական հարցերը պիտի համաձայնեցուն բանակցութիւններու միջոցով:

Հաղորդակցութիւններուն հետ կապուած՝ կողմերը յստակ յառաջընթաց արձանագրած են տարա-

ծաշրջանին մէջ փոխադրութեան եւ տնտեսական կապերու ապաշրջանադարձման վերաբերող հարցերու քննարկումներուն մէջ: Կողմերուն դիրքորոշումները այս թեմային շուրջ արդէն շատ մօտ են՝ խօսքը մասնաւորապէս՝ Նախիջեւանով երկաթուղային կապի վերաբացման մասին է:

Ըմբռնում եղած է, որ գերեվարուած անձեր ազատ պիտի արձակուին յառաջիկայ շաբաթներու ընթացքին: Ես նաեւ ընդգծած եմ, որ մոլորուած քաղաքացիներուն ազատ արձակումը պէտք է իրականացուի արագացուած ընթացակարգով:

«Անդրադարձ եղած է նաեւ Լեռնային Ղարաբաղի հայերու իրաւունքներու ապահովման: Ես յորդորած եմ Ատրպէյճանին ներգրաւուելի դրական օրակարգի մշակման՝ երաշխաւորելու հայերու անվտանգութիւնը՝ միջազգային հանրութեան հետ սերտ համագործակցութեամբ: Ես բարձրաձայնած եմ նաեւ Պաքուի եւ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան միջեւ թափանցիկ երկխօսութեան անհրաժեշտութեան մասին», ըսած է Շարլ Միշէլ:

### Պրիքստեան Հանդիպում մը Եւ

Շարունակուած էջ 1-էն

Հայկական բանակի ուժգին հակահարուածին Պաքուի այս փորձը մատուցեց Թաթարներուն:

Վերադառնալով Պրիքստեան հանդիպումին կարելի է ըսել որ, յառաջընթացի մասին խօսիլը կանուխ է: Ստորագրուած փաստաթուղթի բացակայութեան, արդիւնքներու մասին տեղկութիւններ փոխանցեց Միշէլ ինքը, յայտարարելով որ, Հայաստանի եւ Ատրպէյճանի առաջնորդները հաւատարմութիւն յայտնած են Ալմա-աթայի 1991 թուականի հռչակագրին եւ Հայաստանի ու Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան: Այս անգամ Շարլ Միշէլ յստակ նշեց երկու երկիրներուն տարածքը՝ Հայաստանի 29 հազար 800 եւ Ատրպէյճանի 86 հազար 600 քառակուսի քիլոմէթրը: Միշէլ յայտնեց որ, անդրադարձ եղած է նաեւ Լեռնային Ղարաբաղի հայերու իրաւունքներու ապահովման մասին: «Ես բարձրաձայնած եմ նաեւ Պաքուի եւ Լեռնային Ղա-

րաբաղի բնակչութեան միջեւ թափանցիկ երկխօսութեան մասին», ըսաւ Եւրոպայի Խորհուրդի նախագահը աւելցնելով որ, շաբաթներու ընթացքին պէտք է ազատ արձակուին բոլոր ռազմագերիները:

Այսպիսով, Պրիքստեան հանդիպումի առաջին քննութիւնը պայմանաւորուած է ռազմագերիներու ազատ արձակմամբ, որ պէտք է իրականացուի կարճ ժամանակուայ ընթացքին: Այս անգամ եւս հաւանականութիւնը մեծ է որ, Ատրպէյճան չկատարէ կամ մասամբ կատարէ գայն, ազատ արձակելով փոքր թիւով հայ պատանդներ այդպիսով իսկ ծախողութեան մատուցելով բանակցային այս վերջին գործընթացը եւս: Իսկ քիչեր կը հաւատան որ Ատրպէյճան դուրս կու գայ Հայաստանի 29 հազար 800 քիլոմէթր տարածքէն առանց ռազմական միջոցներու պարտադրանքին, որոնց նախանշանները յուսադրող են:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

### Ղարաբաղի Բնակիչները Շրջափակուած Են

Շարունակուած էջ 1-էն

հետ սահմանի երկայնքով ռազմական սրացումները օգտագործելէ՝ Երեւանի հետ իր բանակցութիւններուն մէջ տարածքային զիջումներ ձեռք բերելու համար, նշուած է յօդուածին մէջ:

Իրաւապաշտպան կազմակերպութիւնը կը նկատէ նաեւ, որ ժողովրդավարական երկիրները արդէն իսկ արտայայտած են իրենց մտահոգութիւնը Պաքուի գործողութիւններուն հետեւանքով մարդու իրաւունքներու խախտումներուն վերաբերեալ, Արդարադատութեան Միջազգային Դատարանը Ատրպէյճանին յանձնարարած է «ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները»՝ ապահովելու մարդոց, ինքնաշարժներու եւ բեռնատարներու անխոչընդոտ տեղաշարժը Լաչինի միջանցքով երկու ուղղու-

թիւններով, սակայն Ատրպէյճանի կառավարութիւնը, որ յայտնի է միջազգային տարբեր մեխանիզմներու անտեսմամբ, հերթական անգամ այդ կ'ընէ:

«Freedom House»-ը կը յաւելէ, որ Ատրպէյճանի կառավարութիւնը սովորաբար հանդուրժող է քաղաքացիական հասարակութեան անկախ խումբերու նկատմամբ եւ բռնութեամբ կը ցրէ շարտօնուած բողոքի ցոյցերը: Միաժամանակ կը նշէ, որ անցեալ տարուան Դեկտեմբերին վարչակազմին հետ կապուած խումբ մը «բնապահպաններ» են, որ արգելափակեցին երթեկութիւնը Լաչինի միջանցքով, իսկ արդէն այս տարուան Ապրիլ 23-ին՝ Հայոց Յեղասպանութեան գոհերու լիշատակի օրուան ընդառաջ, Ատրպէյճանի իշխանութիւնները սկսան միջանցքին պաշտօնական անցակէտեր տեղադրել:

### Խմորումներ Արցախում

Շարունակուած էջ 2-էն

պէտք է ստանձնի գործողութիւնների շատ թիւ քիչ կոնկրետ ուրուագծելի պլանի եւ առնուազն միջանկեալ հանգրուանների պատասխանատուութիւն: Պէտք են մեխանիզմներ, որոնք թոյլ կը տան հանրութեանը լինել այդ գործընթացի կառավարիչ, այլ ոչ թէ դառնալ հանդիսատես ու հետեւել Արցախի նախկին առանցքային ֆիզուրներին՝ չարաբերութիւններ պարզելու ներկայիս գործընթացներին: Եթէ կայ որեւէ մէկը, որն ունի գործնական լուծումների, փոփոխութիւն բերելու կամք, պա-

տասխանատուութիւն ու կարողութիւն, ապա հական չէ՝ նախկինից է, նոր է, վատ մոռացուած, թէ լաւ մոռացուած հին է, պէտք է օգտագործել այդ կամքն ու կարողութիւնը: Բայց, Արցախի հանրութիւնը, ինչպէս եւ իհարկէ Հայաստանի, անցնող մօտ երեք տասնամեակում չափից շատ, անթույլատրելի շատ է վստահել իր իշխանական կամ ընդդիմադիր «էլիտաներին», վստահութեանը զուգահեռ, այսօր պէտք է ունենայ ամենօրեայ ռեժիմով վերահսկելու եւ հաշուետուութիւն պահանջելու կամք եւ հնարաւորութիւն:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

**ՀԱՆԴԻՊՈՒՄ - ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան  
Քաղաքական Դիւանի Կազմակերպութեամբ՝

Հանդիպում-Քննարկում  
ՄԴՀԿ-ի Կեդրոնական Վարչութեան Ատենապետ  
**ՀԱՄԲԻԿ ՍԱՐԱՏԵԱՆ-ի Հետ**



Նիւթ՝  
**ՀԱՅԱՍՏԱՆ**

Նոր Մարտահրաւերներ, Վտանգներ  
եւ Հնարաւորութիւններ

Տեղի կ'ունենայ  
**ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՅՈՒՆԻՍ 1, 2023**  
երեկոյեան ժամը 8:00-ին

ՀԿԲՄ-ի Փաստաթիւայի կեդրոնէն ներս՝  
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Մուտքը՝ Ազատ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel:-----  
Email: -----

## Armenia, Azerbaijan Discuss Resolution of Regional Transportation and Infrastructure Issues in Brussels



Երիտթուրքական կառավարութեան կողմէ հայ ազգաբնակչութեան դէմ կազմակերպուած համատարած ցեղասպանութեան սահմուկեցուցիչ տեղեկութիւնները Ձուկցերիա կը հասնին համեմատաբար շատ աւելի ուշ, քան եղած էր պարագան սուլթանական զանգուածային կոտորածներու 1894-1896 թուականներու եւ ապա 1909 թուականի Ատանայի եւ շրջակայից մէջ տեղի ունեցած եղեռնագործութիւններուն:

Պատճառը՝ Երիտթուրք դաշինքներու բոլոր մանրամասնութեանց մէջ բծախնդրորէն ծրագրած եւ, կարելիութեան սահմաններուն մէջ, գաղտնաբար մեկնարկած տարագրութիւնները, մահուան-աքսորներն ու նախճիր եղեռններն էին, որոնք իրագործուեցան ամբողջ Արեւմտեան Հայաստանի, Դաշտային եւ Լեռնային Կիլիկիոյ տարածքին, մինչեւ Սուրիոյ մահահոտ աւազուտները՝ Տէր Զօր, վերջին հանգրուանը ցեղասպանուող հայութեան:

Համատարած տարագրութիւններու եւ ջարդերու մասին եւրոպական մամուլին մէջ տեղեկութիւններու ուշացումին հիմնական պատճառներէն մին էր նաեւ Կայսերական Գերմանիոյ դիւանագիտութեան թրքանպատ գործունէութիւնը, որ Ա. Համաշխարհային Պատերազմին Օսմանեան Կայսրութեան հետ իբրեւ ռազմական դաշնակից պետութիւն՝ բոլոր միջոցներով արգելք հանդիսացած էր այդ լուրերու արագ տարածումին:

Ա. Աշխարհամարտին սկիզբը, Օսմանեան Կայսրութեան քաղաքական գործունէութիւնը արտաքինապէս այն տպաւորութիւնը կը թողեր, որ որդեգրած է համեմատաբար չէզոք դիրքորոշում մը: Սոցնը սակայն իր վտանգաւոր ուղին կ'առնէ, երբ Երիտթուրքեր 2 Օգոստոս 1914 թուականին Կայսերական Գերմանիոյ հետ ստորագրելով գաղտնի համաձայնագիր մը՝ կը պարտաւորուին հուսկներգրաւուելու Ա. Համաշխարհային Պատերազմի գործընթացին մէջ ի նպատ միջին ուժերուն՝ գերմանաւստրիական խմբաւորումին: Բռնկած այս աշխարհամարտը երիտթուրքերու մշակած համաթուրանական գաղափարախօսութեան իրագործումին լաւագոյն առիթը կ'ընձեռնէ՝ գաղթելով Անդրկովկասը՝ հասնելու մինչեւ Կեղրոնական Ասիա:

Բաց աստի, այսպէս կը ստեղծուէր երկրորդ պատեհութիւն մը եւս պատերազմի ընդհանուր աղմուկին մէջ, մեծ տէրութիւններու ուշադրութենէն հեռու, ի նպատ համաթուրանականութեան վերջնականապէս լուծելու Հայկական Հարցը՝ ընդմիջտ վերացնելով ենթական կամ հարցին գոյութեան բուն պատճառ հանդիսացող հայ ազգաբնակչութիւնը:

Մինչ այդ, 22 Յունուար 1913 թուականին, Երիտթուրքերը շաղողած էին պետական հարուածով մը տապալել Մեհմետ Քամիլ Փաշայի ազատախոհ նկատուող կառավարութիւնը, որուն տեղ նշանակուած էր Երիտթուրքական նոր կառավարութիւն մը՝ Շեքեթ Փա-

շայի գլխաւորութեամբ: 11 Յունիս 1913 թուականին վերջինիս դէմ կատարուած ահաբեկչական ոճիրէն ետք, ստեղծուած էր եռապետութիւն մը եւ իշխանութեան գլուխ անցած էին Երիտթուրքերու ծայրայեղական վտանգաւոր պարագլուխներէն Իսմայիլ էնվեր՝ ռազմական նախարարի, Մեհմետ Թալէաթ՝ ներքին գործոց նախարարի, իսկ Ահմետ ձեմալ՝ ծովակալութեան նախարարի պաշտօններով:

Հակառակ այն փաստին, որ վերոյիշեալ երրորդութեան կողմէ արդէն սահմանուած էր ռազմական իշխանութիւն մը, տակաւին Կ.Պոլսոյ մէջ մինչեւ 13 Մարտ 1915 թուականը իր գործունէութիւնը կը շարունակէր այսպէս յորջորջուած Օսմանեան Խորհրդարանը: Վերջինիս բարձուով հուսկ իր մահահանգոյն սկիզբը կ'առնէր Հայոց Ցեղասպանութեան երկրորդ փուլը: Առանց ներքին քաղաքական ընդդիմութեան, եւ պատերազմի բերումով արտաքին աշխարհէն «կտրուած», Երիտթուրքական կառավարութիւնը կը սանձագերէ իր ժահրաթոր ատելութիւնը՝ իրագործելով նախապէս իր ազգայնապաշտական մտածումներուն մէջ սաղմնաւորուած հայ ազգաբնակչութեան ոչնչացման ծրագիրը:

### Երիտթուրք պարագլուխներու գաղտնաժողովը եւ յանցագործութեան «տասը պատուիրանները»

Սոցնը կը մշակուի Ա. Համաշխարհային Պատերազմը սկսելէ ետք, 1915 թուականի Յունուարի կէսերուն՝ Թալէաթի նախագահութեամբ եւ Երիտթուրք պարագլուխներու՝ էնվերի, Նազըմի, Պեհաշտտին Շաքիրի, ձաւիտի, Հասան Ֆեհմիի, Իսմայիլ ձանփուլատի եւ այլոց մասնակցութեամբ գումարուած գաղտնաժողովի ընթացքին, որ ցեղասպանագիտութեան մէջ յայտնի է «տասը պատուիրաններ»(1) եզրոյթով:

Այսպիսի մահագոյժ ծրագրի մը գոյութեան մասին հայ հանրութիւնը առաջին անգամ տեղեկ կը դառնայ 1919 թուականին, երբ ան օսմաներէնէ հայերէնի թարգմանուելով ամբողջութեամբ կը հրատարակուի Կ.Պոլսոյ հայ մամուլի էջերուն մէջ(2): Լէօ, գայն քաղելով «Վերջին լուր» թերթին, կը վերահրատարակէ «Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը» խորագրով իր աշխատասիրութեան Բ. հատորին մէջ(3): Բնականաբար, առկայ կարեւորագոյն նիւթին հետագային կ'անդրադառնան նաեւ շարք մը պատմաբաններ եւ ցեղասպանագէտներ, որոնց մէջ հարկ է նշել Արթուր Պէյլէրեանը, Վահագն Տատրեանը եւ Ռուբէն Սաֆրաստեանը:

Պատմութեան յայտնի է, որ Օսմանեան Կայսրութեան մէջ բնիկ հայ ազգաբնակչութիւնը բնաջնջելու ծրագիրը առաջին անգամ քննարկուած է 29 Սեպտեմբերէն մինչեւ 9 Հոկտեմբեր 1911 թուականին գումարուած «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան 4րդ համագումարի նիստերուն ընթացքին: Այս մտադրութիւնը, ահաւասիկ, Երիտթուր-



Երիտթուրք ոճրագործները, Յունուար 1915 թ.

քերու վերոնշեալ գաղտնաժողովին մէջ արդէն կը կենսագործուի՝ վերածուելով յստակ ծրագրի մը.

1. «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան կանոնակարգի 3րդ եւ 4րդ կէտերը օգտագործելով՝ փակել բոլոր հայկական միութիւնները եւ ձերբակալել բոլոր անոնք, որոնք երբեւէ գործած են կառավարութեան դէմ, եւ ուղարկել զանոնք այնպիսի նահանգներ, ինչպիսիք են Պաղտատ կամ Մուսուլ, եւ ոչնչացնել զանոնք ճանապարհին կամ տեղուցն վրայ:
2. Բռնագրաւել հայոց բոլոր տեսակի գէնքերը:
3. Համապատասխան ու մասնաւոր միջոցներով հայերու դէմ գրգռել մահամետականներու կարծիքը. այնպիսի վայրեր, ինչպիսիք են Վանը, Էրզրումը եւ Ատանան, ուր հայերը փաստօրէն արդէն արժանացեր են մահամետականներու ատելութեան, հրահրել

կազմակերպուած կոտորածներ, ինչպէս ոուսերը ըրին Պաքուի մէջ:

4. Էրզրումի, Վանի, Մեմուրեթի, Արգիզի եւ Պիթլիսի նահանգներուն մէջ [կոտորածներու] գործադրումը թողել ժողովուրդին, զօրքերն ու կարգապահական ուժերը իբրեւ թէ ջարդերը արգիլելու գործածել, իսկ ընդհակառակը՝ Ատանայի, Սվազի, Պրուսայի, Նիկողեմիոյ եւ Զմիւռնիոյ մէջ մահամետականներուն օգնել զինուած ուժերով:

5. Բնաջնջումը գործադրել մասնաւորաբար յիսունէն վար բոլոր այրերու, հոգեւորականներու եւ ուսուցիչներու վրայ, թողելով աղջիկներն ու երեխաները մահամետականացնելու նպատակով:

6. Տեղահանել փախչիլ շաղղածներուն ընտանիքները եւ միջոցներ ձեռնարկել երկրին հետ անոնց կապը բոլորովին խզելու

Շար.ը էջ 13

**ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION**



**AEBU SCHOLARSHIP PROGRAM**

APPLICATIONS NOW OPEN

Through June 30, 2023

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.



To apply, visit our website

WWW.AEBU.ORG

EMPOWERING OUR YOUTH FOR A BRIGHTER FUTURE

626•344•7321

AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE  
1060 North Allen Avenue  
Pasadena, CA 91104

# Ձուկցերիացի Հարիր Երեւելիներու Վկայութիւնը

Շարունակուած էջ 12-էն

Համար:

7. Հայ կառավարական պաշտօնեաները, պատճառաբանելով թէ լրտեսութիւն ըրած են, վտարել բոլոր պաշտօնատուներէն:

8. Բանակին մէջ գտնուող բոլոր հայերը սպաննել՝ իրականացումը թողելով զինուած ուժերուն:

9. Բոլոր գործողութիւնները ամէնուրեք միաժամանակ սկսիլ եւ, այսպէս, ինքնապաշտպանութեան դիմելու ժամանակ չթողել:

10. Նկատի ունենալով այս հրահանգներուն խիստ գաղտնի բնոյթը, մեծապէս ուշադիր ըլլալ, որ անոնք մնան ընդամէնը մէկերկու ժամուրթի միջեւ»(4):

Եթէ ցարդ հայտնացութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ գաղափարախօսութիւն մը, հայ տարրը խտրականութեան ենթարկելու կամ զայն ընդամէնը ռալայի մը կարգավիճակով հանդուրժելն էր, այժմ այս ծրագրով կը վերածուի մահաբեր գէնքի, որուն կենսագործումը այնուհետեւ Դամկոլեան սուրի նման հայ ժողովուրդի գլխուն վրայ կախուած վերահաս օրհասական մըն էր:

### «Տեղահանութեան մասին ժամանակաւոր օրէնք»

Ամբողջ կայսրութեան տարածքին արդէն իսկ իրագործուող հայոց զանգուածային տարագրութիւններուն եւ կոտորածներուն «օրինական» տեսք մը տալու նպատակով ներքին գործոց նախարար Թալէաթի նախաձեռնութեամբ երիտթրքական կառավարութիւնը 30 Մայիս 1915 թուականին կը վաւերացնէ 4 յօդուածներէ կազմուած «Տեղահանութեան մասին ժամանակաւոր օրէնք»ը:

Հայրենի անուանի արեւելագէտ պատմաբան Ռուբէն Սաֆրաստեան կ'առաջադրէ այն համոզիչ տեսակէտը, թէ նշուած ժամանակաւոր օրէնքը կը հետապնդէր Երիտթուրքերու պետական յանցագործութիւնը սքողելու նպատակով (5):

Արդարեւ, յանցագործներ սովորաբար կը փորձեն կոծկել իրենց յանցագործութիւնը: Նոյն հոգեբանութեամբ ու գործելաոճով կը վարուին նաեւ Հայոց Ցեղասպանութեան գլխաւոր պատասխանատուները, երբ կ'անդրադառնան, թէ ի վերջոյ պատասխանատուութեան պիտի ենթարկուին իրենց թոյլ տուած պետական յանցագործութեան համար: Յիրաւի, 24 Մայիս 1915 թուականին, Անթանի Երեք տէրութիւնները՝ Ռուսիա, Մեծն Բրիտանիա եւ Ֆրանսա, բողոքի յուշագիր մը կը յղեն երիտթրքական կառավարութեան՝ սպառնալով հետապնդել զայն «մարդկայնութեան եւ քաղաքակրթութեան դէմ յանցագործութիւն»ներու մեղադրանքով: Այս յուշագրին մէջ նաեւ առանձնապէս կը նշուի, որ պատերազմի աւարտին հայ ժողովուրդին դէմ իրագործուած բռնութիւններուն համար յանցագործներ անձամբ պիտի ենթարկուին պատասխանատուութեան(6):

Նոյն օրը անոնք ֆրանսերէն լեզուով շարադրուած այս յուշագիրը Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան եւ «Հաւաս» հեռագրային ծառայութեան միջոցով կ'առաքեն Կ.Պոլիս եւ Պեռլին: Սակայն նկատի ունենա-

լով, որ պատերազմին պատճառով Անթանի Երեք տէրութիւնները դիւանագիտական յարաբերութիւն չունէին Օսմանեան կայսրութեան հետ, նշուած ազդարարագիրը չէր կրնար պաշտօնապէս եւ անձամբ յանձնուիլ երիտթրքական կառավարութեան՝ ներկայացուցիչներուն, ուստի կարիքը կը զգացուէր իրականացնել զայն երրորդ կողմի մը միջոցով: Այսպէս, անոր ֆրանսերէն բնագիրը 28 Մայիս 1915 թուականին Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութիւնը կ'ուղարկէ Ուաշինկթըն, ուրկէ ան կը փոխանցուի Կ.Պոլիս տեղակալուած ամերիկեան դեսպանատան, որովհետեւ Ամերիկայի Միացեալ Նահանգները տակաւին ներգրաւուած չէր Ա. Համաշխարհային Պատերազմին մէջ: Այս ճամբով, ուրեմն, 29 Մայիս 1915 թուականին, Միացեալ Նահանգներու դեսպան Հենրի Մորկընթաու վերոնշեալ բողոքի յուշագիրը, աւելի ճիշդ՝ ազդարարագիրը, անձամբ կը յանձնէ Օսմանեան կայսրութեան մեծ վեզիր Սայիտ Հալիմ փաշային(7):

Անտարակոյս, առկայ ազդարարագիրը ծանրակշիռ մեղադրանք մըն էր՝ ուղղուած երիտթրքական իշխանութեան պարագլուխներուն, որոնք պատերազմի աւարտին «մարդկայնութեան եւ քաղաքակրթութեան դէմ յանցագործութիւն»ներու համար անձնապէս պիտի ենթարկուէին պատասխանատուութեան: Բնականաբար, ներքին գործոց նախարար Թալէաթ փաշան առաջիններէն էր, որ խիստ պիտի անհանգստանար եւ մատնուէր խուճապի: Ան ստոյգ գիտակից էր իր յանցագործութեան, քանի որ ինք տուած էր տարագրութեանց եւ եղեռնագործութիւններուն հրամանները: Սոյնը ան խոստովանած է իր հաւատարիմ ընկերներէն իսաիլ Պէյ Մեթիշիին՝ «Միութիւն եւ Յաւատարմութիւն» կուսակցութեան նոյնքան արիւնախանձ առաջնորդներէն մէկուն, որ այս մասին հետագային նշած է իր յուշերուն մէջ: Այսպէս, Թալէաթ կը փորձէ յանցագործութիւնը բարդել նաեւ ուրիշներու վրայ, որպէսզի ինք չզրառնայ Հայոց Ցեղասպանութեան միակ

մեղաւորը: Հետեւաբար, ան պարտադրելով իր հեղինակութիւնը եւ բոլոր միջոցները գործի դնելով՝ կ'աշխատի, որ կառավարութիւնը այս ուղղութեամբ իսկոյն որոշումներ ընդունի, վաւերացնէ օրինական, այսպէս կոչուած՝ յանցագործութիւնը կոծկելու պատրուակ մը, որուն արդիւնքը կը հանդիսանայ վերոնշեալ «Տեղահանութեան մասին օրէնք»ը: Սոյնը կ'ընդունուի 27 Մայիսին եւ ուժի մէջ կը մտնէ 1 Յունիս 1915 թուականին, որ կը վաւերացուի սուլթան Մեհմետ Ե. Ռեշատի, մեծ վեզիր Սայիտ Հալիմ փաշայի եւ պատերազմի նախարար Էնվեր փաշայի ստորագրութիւններով: Ստորեւ այդ օրէնքը.

1. «Պատերազմական դրութեան ժամանակ բանակներու, զօրբանակներու եւ զօրամիւտներու հրամանատարներն ու անոնց տեղակալները, նաեւ առանձին դիրքերու հրամանատարները լիազօրուած եւ պարտաւոր են օգտագործելու ռազմական ուժերը, առանց չապաղելու կիրառելով խստագոյն պատիժներ՝ իր սողմին մէջ խեղդելու համար որեւէ ըմբոստութիւն, երբ իսկոյն կը յայտնաբերեն, թէ բնակչութիւնը որեւէ ձեւով կ'ընդդիմանայ կառավարութեան հրահանգներուն եւ երկրի պաշտպանութեան, կարգու կանոնի պահպանման վերաբերեալ միջոցառումներուն:

2. Բանակներու եւ առանձին զօրբանակներու, նաեւ զօրամիւտներու հրամանատարները կրնան ռազմական անհրաժեշտու-

թեան, լրտեսութեան կամ դաւաճանութեան յայտնաբերման պարագային գիւղերու եւ գիւղաքաղաքներու բնակչութիւնը առանձինառանձին կամ զանգուածաբար այլ վայրեր ուղարկել եւ զանոնք վերաբնակեցնել այնտեղ:

3. Սոյն օրէնքը հրապարակման օրն իսկ կը մտնէ գործադրութեան մէջ:


4. Այս օրէնքի դրոյթներուն գործադրութեան համար պատասխանատու են գլխաւոր հրամանատարի տեղակալը եւ ռազմական նախարարը»(8):

Հակառակ այն փաստին, որ մէջբերուած «Տեղահանութեան մասին օրէնք»ին մէջ ոչ մէկ տեղ կը նշուի հայ անունը, բայց եւ այնպէս միանգամայն ստոյգ է, որ ան ուղղակի առնչուած է արեւմտահայրէջքի հետ իրագործուող բռնարարներուն եւ միայն այդ է հիմնարար դրդապատճառը առկայ օրէնքի ընդունման:

Թէեւ վերոգրեալ օրէնքը մէկ կողմէն կոչուած էր կոծկելու հայոց դէմ իր մահահանգոյն ընթացքն առած եղեռնագործութիւնը, միւս կողմէն՝ կանխելու միանձնեայ պատասխանատուութիւնը, որ միանշանակ պիտի բարդուէր Թալէաթի անձին վրայ, այսուամենայնիւ այդ առաջին հերթին կ'օգտագործուէր՝ ներգրաւուելու համար նաեւ թրքական գիւղուած ուժերը հայ ժողովուրդի բնաջնջման ծրագրի իրականացման գործընթացին մէջ:

(Շարունակելի)

- 1- Սաֆրաստյան, Ռուբեն, «Օսմանյան կայսրութիւնը. Ցեղասպանութեան ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)», Երեւան, 1009, էջ 168:
- 2- Տե՛ս նոյն տեղը, էջ 168-169:
- 3- Տե՛ս Լեօ, «Թիւրքիայի յեղափոխութեան գաղափարաբանությունը», Փարիզ, 1935, էջ 153-154:
- 4- Տե՛ս նոյն տեղը, էջ 175-176, 189:
- 5- Տե՛ս «Neue Zürcher Zeitung», 24.5.1915; «Basler Nachrichten», 25.5.1915; «Der Bund», 26.5.1915; «Journal de Genève», 26.5.1915. Սաֆրաստյան, Ռուբեն, նոյն տեղը, էջ 174:
- 6 - Տե՛ս Սաֆրաստյան, Ռուբեն, նոյն տեղը, էջ 174-175:
- 7- Յմմտ. Gottschlich J., Beihilfe zum Völkermord, Deutschlands Rolle bei der Vernichtung der Armenier, Frei-burg, 2015, S. 311-312; Տե՛ս Սաֆրաստյան, Ռուբեն, նոյն տեղը, էջ 188:
- 8- Յմմտ. «Ճակատամարտ», Երկուշաբթի, 13 Յունուար 1919, էջ 2:



ՀՈՎԱՍԱԴՐՈՒԹԵԱՄԲ  
ՀԻՄՆԱՍԻՍ ԿՈՆՍԵՐՏԱՆ ԱՐԵՎՍԵԱՆ ԹԵԱՏՐ  
ԲԱՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ

**Գերշն. Տ. ՅՈՎԱՆՆ Արք. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ**

ՅԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅՆՆԻ ՆՈՒԻՐՈՒԾ  
**ԹԱՄԱՐ ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ**  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍԻՆ

Նախաձեռնութեամբ՝  
ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՉՈՒԲՐԹՆՈՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԻ  
ՀԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՀԱՅ ՏԻԿԱՆԱՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ – AIWA

Մասնակցութեամբ՝  
**Սիլվա Քաջիկեանի**  
**Լիլիթ Քեիկեանի**  
**Գարոլին Թիւֆեմբեանի**  
Տնօր. **Սիմոն Սիմոնեանի**  
**Վաչէ Մանկրեանի**  
**Շահէ Մանկրեանի**  
**Սէմ Երիզանի**

**ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍ 25, Երեկոյեան ժամը 7:30-ին**  
Agajanian Auditorium – AGBU Manoogian-Demirjian School  
6844 Oakdale Ave., Canoga Park CA 91306

# Երեւանում Կայացել է «Ճախրելով Դէպի Վեր» Ֆիլմի Պրեմիերան



Մոսկուա կինոթատրոնում տեղի է ունեցել «Ճախրելով դէպի վեր» ֆիլմի երեւանեան պրեմիերան, որը նուիրուած է Հայրենական մեծ պատերազմում յաղթանակի 78-րդ տարեդարձին: Ռուսական ռազմական դրամայի պրեմիերան նախաձեռնել էր Երեւանում «Դոմ Մոսկուի» մոսկովեան մշակութա-գործարարական կեդրոնը՝ Մոսկուայի կառավարութեան եւ Մոսկուայի արտաքին տնտեսական եւ միջազգային կապերի դեպարտամենտի աջակցութեամբ:

«Այսօր դահլիճում ներկայ են տարբեր սերունդների ներկայացուցիչներ, երեխաներ, ովքեր նման ֆիլմերի շնորհիւ դաստիարակուում են համամարդկային արժէքներով՝ հայրենասիրութեամբ, հայրենիքին ու սեփական ժողովրդին նուիրուածութեամբ: Վստահ եմ, որ ֆիլմի դիտումը, քննարկումն ու նկարահանող թիւմի հետ շփումը կ'արթնացնեն ամենաաւանկեղծ զգացմունքները», - ընդգծել է Երեւանում «Դոմ Մոսկուի» կեդրոնի գլխավոր տնօրէն Վահրամ Կարապետեանը՝ շեշտելով ստեղծագործական թիւմի հսկայական աշխատանքը պատմական յիշողութեան պահպանման գործում:

«Երբ նման ֆիլմեր ես դիտում, նորից վերապրում ես այն իրադարձութիւնները, որոնք տեղի են ունեցել 78 տարի առաջ, ապրումակցում ես հերոսներին: Այս ամէնը արդիական է յատկապէս հիմա, քան որ շատ դժուար ժամանակներ ենք ապրում: Արժէքաւոր են այն ստեղծագործութիւնները, ֆիլմերը, գրքերը, որոնք մեզ վերադարձնում են այդ տարիներ, օգնում են աւելի լաւ իմաստաւորել տեղի ունեցած իրադարձութիւնները եւ ճիշտ դասեր քաղել», - նշել է ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազօր դեսպան Սերգէյ Կոպիլովին:

Ֆիլմի գլխավոր պրոդիւսըր Անաստասիա Շիպուլինան շնորհակալութիւն է յայտնել Երեւանում «Դոմ Մոսկուի» կեդրոնին ֆիլմի պրեմիերան կազմակերպելու համար:

«Մոսկուայում ֆիլմի պրեմիերան կայացաւ Մայիսի 8-ին եւ արդէն Մայիսի 12-ին այն ցուցադրուում է Երեւանում: Շատ հաճելի է եւ յուզիչ: Մա մեր առաջին համագործակցութիւնը չէ Երեւանում «Դոմ Մոսկուի» կեդրոնի հետ: Չմրանը մենք այստեղ ներկայացրեցինք «Մարիա. փրկել Մոսկուան» ֆիլմը, որը նոյնպէս պատեմագմի մասին էր: Կարող եմ համարձակ ասել, որ մեր գործակցութիւնը յաջողուել է», - ասել է Անաստասիա Շիպուլինան:

Ռեժիսոր Օլգա Մուզալեւայի

«Ճախրելով դէպի վեր» դրաման նուիրուած է ռազմական օդաչու Աննա Պետրովայի (դերասանուհի Կատերինա Շպիցա) պատմութեանը, որը Հայրենական մեծ պատերազմի ընթացքում իր առաջ նպատակ էր դրել վրէժ լուծել գերմանացի օդաչուից, որի պատճառով մահացել էր իր սիրելին: 1943-ին Աննա Պետրովան աւիացիոն գործարանի առաջատար ինժեներներից էր, որտեղ փորձարկում են «Կրեչետ» մոտոլի նոր ինքնաթիռները:

Ֆիլմը մի կնոջ մասին է, որը պատերազմի մէջ է անցկացնում իր երիտասարդութիւնը, առաջին անգամ սիրահարուում է եւ ունենում ողբերգական կորուստներ: Աննան իր պայքարը նուիրում է գոհուած ընկերոջը: Միեւնոյն ժամանակ պատերազմական ծանր ժամանակներում մարդիկ շարունակում էին հենարան փնտնել միմեանց մէջ եւ գտնել հարազատ հոգիներ:

«Դրաման պատմում է այն մասին է, թէ որքան ծանր էր տրուում յաղթանակը, ինչ ծանր փորձութիւններ էին ստիպուած յաղթահարել մեր հայրերն ու պապերը: Միեւնոյն ժամանակ սա ֆիլմ է կնոջ եւ պատերազմում սիրոյ մասին: Ընդգծում է կանանց դերը Հայրենական մեծ պատերազմում եւ այն անգնահատելի ներդրումը, որ նրանք ունեցել են յաղթանակի գործում», - պատմել է ֆիլմի ռեժիսոր Օլգա Մուզալեւան:


Երեւանեան պրեմիերան անցել է լեւի-լեցուն դահլիճում: Դիտումից յետոյ տեղի է ունեցել ֆիլմի քննարկում հանդիսատեսի հետ, ներկաները կիսուել են տպաւորութիւններով:

«Այսքան շատ հանդիսատես եւ այսպիսի ջերմ ընդունելութիւն մենք չենք ունեցել նոյնիսկ Մոսկուայում», - ասել է ֆիլմի գլխավոր դերասանուհի Կատերինա Շպիցան:

«Թեման ցաւոտ է յետխորհրդային բոլոր ժողովուրդների համար, չկայ մի ընտանիք, որին պատերազմը չի առնչուել: Ինձ համար շատ հետաքրքիր էր խաղալ ռազմական օդաչուի դերը, անսովոր ու նոր էր նաեւ գինուորական համագրեւտ կրելը: Իմ ոգեւորութեանը չէր խանգարում անգամ այն փաստը, որ ֆիլմը նկարահանուում էր աշխան ցուրտ եղանակին», - աւելացրել է դերասանուհին:

Միջոցառմանը ներկայ է եղել նաեւ Հայրենական մեծ պատերազմի վեթերան Ռոզալիա Աբգարեանը, ով շնորհակալութիւն է յայտնել նկարահանող թիւմին կատարած պրոֆեսիոնալ աշխատանքի եւ թեմայի նկատմամբ սրտացաւ վերաբերմունքի համար:

# Նուրբ Ապրումների Տեր Բանաստեղծն Ու Զօր Քաղաքացին. Ընթերցողի Սեղանին Ե Դրուել «Ոչ Մի Շարաք Առանց Տրեանի» Ժողովածուն



Հետաքրքիր յուշեր, սիրուած ու անյայտ բանաստեղծութիւններ, յղուածներ, օրագրային գրառումներ, բացառիկ լուսանկարներ, որոնք կ'օգնեն խորհել Տէրեանի հետ իւրաքանչիւր օր ու շաբաթ:

«Ձանգակ» հրատարակչութիւնն ընթերցողին է ներկայացրել «Ոչ մի շաբաթ առանց Տէրեանի» ժողովածուն: Գիրքը համալրում է հրատարակչութեան «Ոչ մի շաբաթ առանց գրականութեան» շարքը եւ այս ձեւաչափով լոյս տեսած գրքերից եօթերորդն է:

«Ես փորձել եմ Տէրեանին ներկայացնել հնարաւորինս ընդգրկուն եւ բազմազան՝ նամակներով, բանաստեղծութիւններով, յուշերով, որպէսզի իւրաքանչիւր ընթերցող կարողանայ գտնել իր Տէրեանին եւ բացայայտել սիրելի բանաստեղծի անհուն խորութիւնը: Սա, իհարկէ, գիտական ուսումնասիրութիւն չէ, բայց նշուած են աղբիւրները եւ ընթերցողը կարող է փնտնել, գտնել, ճանաչել Տէրեանին», - նշում է գրքի կազմող եւ խմբագիր Հայկ Համբարձումեանը:

Բանաստեղծի կեանքն ու ստեղծագործութիւնները գրքում ներկայացուած են տարուայ շաբաթների համապատասխան 52 անդրադարձ-դրուագներով: Միրուած ու անյայտ բանաստեղծութիւններից զատ ընտրանիում տեղ են գտել նաեւ գրողի նամակները, թարգմանութիւնները, բացառիկ լուսանկարներ ու դրուագներ նրա կեանքից, որոնք բացայայտում են Տէրեանին, որպէս հայրենասէր ու հօր քաղաքացի:

«Ձանգակ» հրատարակչութեան եւ Հայկի այս նախաձեռնութիւնն ուղղակի փառահեղ գաղափար է, քանի որ մենք դասագրքերից դուրս չենք ճանաչում մեր գրողներին: «Ոչ մի շաբաթ առանց գրականութեան» շարքի ընտրանիները եւ յատկապէս Տէրեանին նուիրուած այս ժողովածուն պատկերացում փոխող են եւ ընդարձակուած կամ փոփոխուած պատկերացումներ են տալիս մեր գրողների մասին: Այլ տեսանկիւնից բացայայտուել են Եղիշէ Չարենցի, Յովհաննէս Թումանեանի, Հրանտ Մաթեոսեանի կերպարները, հիմա էլ Տէրեանին ենք նորովի բացայայտում: Այս դէպքում առաւել քան նկատելի է դա: Եթէ Տէրեանի կերպարը բացայայտուած լինէր, չէր լինի կարծրատիպ տէրեանական աշունների ու տխրութիւնների մասին, չէին լինի պարզունակ

պատկերացումները տէրեանական հայրենասիրութեան եւ սիրերգութեան մասին: Շատ հաճելի է, որ այս ընտրանին գալիս է այդ օրինաչափութիւնները ցրելու, որովհետեւ եւ՝ ընտրուած լուսանկարները, եւ՝ տեքստերը բացայայտում են բոլորովին ուրիշ Տէրեանի, մարդու, որը ոչ միայն նուրբ ապրումների տեր բանաստեղծ էր, այլեւ հօր քաղաքացի, որի նման գործիչներ մենք շատ քիչ ենք ունեցել: Եթէ շարքի նախորդ գրքերն օրացոյցային ուղղուածութիւն ունէին, այս ընտրանին արդէն մենագրութեան է մօտենում կամ կենսագրավէպի», - նշում է գրականագէտ Արքմենիկ Նիկողոսեանը:

Շարքի առաջին գրքերը ունէին օրացուցային կառուցուածք եւ կարող էին դառնալ իւրօրինակ նօթատետրեր: Ընթերցողի համար թողնուած էին ազատ էջեր ու սողեր, որտեղ նա կարող էր գրել իր սիրած սողերը, նշումներ անել: Մատենաշարի վերջին գրքերում ազատ էջերը գնալով նուազում են, իսկ Տէրեանին նուիրուած ժողովածուում արդէն բացակայում են:

«Մեզ համար կարեւոր էր, որ ընթերցողն ապրի գրականութեան մէջ, ամէն օր պոէզիա կամ արձակ լինի իր կեանքում, դրա համար մտածել էինք ընտրանի-նօթատետր ձեւաչափով: Բայց ժամանակը ցոյց տուեց, որ ընթերցողները չեն ուզում նշումներ անել գրքում եւ ընտրանիները այդպէս էլ նօթատետր չդարձան: Աստիճանաբար բաց էջերը նահանջեցին՝ իրենց տեղը զիջելով բանաստեղծութիւնների, ուսումնասիրութիւնների եւ այլն: «Ոչ մի շաբաթ առանց Տէրեանի» ժողովածուի շապիկի վրայ որպէս յիշողութիւն թողել ենք նօթատետր-ընտրանի գրուածքը, բայց եւ այնպէս, յաջորդիւ արդէն նօթատետր բառն էլ դուրս կը գայ եւ կը մնայ ընտրանին, բայց ոչ թէ բանաստեղծութիւնների կամ երկերի ընտրանի, այլ, այսպէս ասած, հեղինակի կեանքի դրուագների ընտրանի», - պատմում է Հայկ Համբարձումեանը:

«Ձանգակ» հրատարակչութեան «Ոչ մի շաբաթ առանց գրականութեան» շարքը շարունակաբար կը լինի: Յաջորդիւ ընթերցողի սեղանին կը դրուի Աւետիք Իսահակեանին նուիրուած ընտրանին:

# Գումարուեցաւ Արեւմտեան Թեմի 96-րդ Պատգամաւորական ժողովը

Շարունակուած էջ 11-էն

## ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱՎԱԿԱՆ 96-ՐԴ ԺՈՂՈՎ

Մայիսի 5-ը ամբողջութեամբ նուիրուեցաւ Արեւմտեան Թեմի Պատգամաւորական տարեկան 96-րդ ժողովի աշխատանքներուն: Այն բացուեցաւ հոգեւոր արարողութեամբ, ներկաները մէկ վայրկեան լուսեմբար եւ աղօթքով յիշեցին անցնող շրջանին ի Գրիստոս ննջած նախկին Առաջնորդ, լուսահոգի վաչէ Արք. Յովսէփեանին եւ եկեղեցւոյ կեանքին մէջ զգալի աւանդունեցած հաւատաւոր ննջեցեալ զաւակներուն, որոնց շարքին՝ Անդրանիկ Զօրայեան, Կրեկ Զերկոյեան, Լիլի Պալեան, Նազարէթ Քեռնեան, Դոկտ. Վահրամ Պիրիճիք, Կլարա Մարկոսեան, Արփի Պարսամ:

Ապա սկսաւ ժողովը՝ համաձայն կանոնակարգի: Մասնակիցներուն իր հայրական օրհնութեան գիրը յղած էր Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ. Վեհափառ հայրապետը, որու մէջ ըստուած է. «Գոհութեան աղօթք ենք բարձրացնում առ Աստուած, որ ձեր բարեջան Առաջնորդի ղեկավարութեամբ շէն ու պայծառ էք պահպանում ԱՄՆ Հայոց Արեւմտեան Թեմը եւ այսօր համախմբուել էք ի մի բերելու Թեմական մարմիններու եւ կառուցներու տարեկան գործունէութեան արդիւնքները՝ ամբարելով որպէս բարի հունձք, ինչպէս եւ միասնաբար նախատեսելու առաջիկայ ծրագրերը»:

Յովնան Արք. Տէրտէրեանը իր հոգեւոր պատգամի մէջ երախտագիտութիւն յայտնեց հաւատացեալներուն՝ որպէս Թեմակալ առաջնորդ անցնող 20 տարիներուն ունեցած աջակցութեան եւ քաջալերանքի համար՝ ըսելով. «Քսան տարիներու ծառայութեանց մէջ ամբողջական ու լիարժէք պէտք է տեսնել Թեմի եւ հոգեւորականաց, եւ Թեմական ու ծխական մարմիններու, եւ Առաջնորդարանի ողջ պաշտօնէութեան եւ ի մասնաւորի հաւատացելոց ծառայութիւնը: Այլ լապէս, անհնար պիտի ըլլար ձեռք բերել այն, ինչին ակնատեսն ենք այսօր բոլոր մակարդակներու վրայ: Ուրեմն իմ պատուական ժողովուրդին ուղղելով խօսքս՝ պարզ ու անկեղծ կ'ուզեմ արտայայտել երախտագիտութիւն ձեր հարկերէն: Այս փաստը ներկաները ընդունեցին բոլորն ծափահարութիւններով, որ առհասարակ թէ՛ ժողովի միջոցաւ եւ արդիւնաւէտութեան, թէ՛ Առաջնորդ Սրբազանի գործունէութեան գնահատականի նշանակն էր:

տագիտական զգացումներս, որ մինչեւ օրս կատարուածի պատկերը կը ներկայացնէ Ձեր աղօթքն ու ծառայութիւնը: Եւ իմ աղօթքն է, որ Աստուած վարձահատուց ըլլայ Ձեզի»:

«Ինչ է խոստումս այս հանգրուանին, շարունակեց Սրբազան Հայրը: Աստուծոյ կամօք ժամանակի մը համար եւս շարունակել ծառայութիւնս եւ ամբողջացնել այն բոլոր ծրագրերը, որոնք դեռ եւս կը կարօտին լուրջ ուշադրութեան ու հոգածութեան: Այնուհետեւ հիմնական շեշտը դնել առաւել մեծ թափով նոր հոգեւորականներու պատրաստութեան, երիտասարդութեան շարքերը ընդլայնելու առաքելութեան, աշխուժացնել քրիստոնէական առաքելութիւնը բոլոր ոլորտներէն ներս, զարկ տալ հասարակական ծառայութեանց, շարունակելով հանդերձ Թեմական մնացեալ բոլոր ծրագրերը, որոնք իրապէս անհրաժեշտ են ու օգտակար մեր ժողովուրդը ի մի հաւաքելու, նորահաս սերունդի մէջ ամրագրելու հայութեան ինքնութիւնը եւ հաստատօրէն կապելու բոլորը Մայր Հայաստանին, Ս. Էջմիածնի հետ, մնալով նուիրեալ քաղաքացիները Միացեալ Նահանգաց»:

Ժողովական բոլոր անհրաժեշտ կէտերը ճշգրտօրէն կատարելով, Պատգամաւորական ժողովը դատաւոր Ատրինէ Գրիգորեանի ատենապետութեամբ, զրեթէ միաձայն քուէարկութեամբ վստահութեան քուէ տուաւ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին՝ շարունակելու առաջնորդական պաշտօնը յաջորդող 8 տարուայ ժամակահատուածի համար: Այս փաստը ներկաները ընդունեցին բոլորն ծափահարութիւններով, որ առհասարակ թէ՛ ժողովի միջոցաւ եւ արդիւնաւէտութեան, թէ՛ Առաջնորդ Սրբազանի գործունէութեան գնահատականի նշանակն էր:

Այնուհետեւ ժողովին ներկայացուեցան Առաջնորդարանի գեկոյցը, որու մասին կը խօսուի վերջին 20 տարուան հաւաքական նուաճումներու մասին, Թեմական խորհուրդի, Արեւմտեան Թեմի գործադիր տնօրէնի, E-Postle Mission-ի եւ այլոց գեկոյցները: Տեղի ունեցան Թեմական խորհուրդի եւ

այլ յանձնարարութեան պատասխանատուներու ընտրութիւններ:

Թրփանձեան հրապարակին վրայ խմբային լուսանկարէն յետոյ պատուիրակները ճաշով հիւրասիրուեցան Նազարէթ եւ Սիմա Գալաթեան սրահին մէջ: Արեւմտեան Թեմին 2005 թուականէն ի վեր Արքեպիսկոպոսի մրցանակ կը շնորհուի այն անհատներուն, ովքեր իրենց նուիրեալ ծառայութեան միջոցով քրիստոնէական օրինակ կը բերեն եւ 2023-ի Արքեպիսկոպոսի մրցանակի արժանացան Տ. Վազգէն Քհնյ. Մովսիսեանը, որպէս տարուայ քահանայ, Տիկին Սիլվա Քաչիկեանը, Տարուայ ծուխ ճանչցուեցաւ Սուրբ Անդրէաս հայկական եկեղեցին:

96-րդ Թեմական ժողովը կատարեց հետեւեալ ընտրութիւնները: 97-րդ Պատգամաւորական ժողովի Ատենապետ՝ Պրոֆ. Պարլօ Սրկ. Տէր Մկրտիչեան, Փոխատենապետ՝ Սթիւ Ադամս, Համագումարի քարտուղար՝ Պամելա Աբաջի: Թեմական խորհրդի անդամներ՝

- Վարդան Նազիրեան - Ատենապետ
- Պետրոս Անսէրեան - Փոխատենապետ
- Սիլվա Քաչիկեան - Խորհրդական
- Միքայէլ Միսաքեան - Գանձապահ
- Սիւզի Գրիգորեան - քարտուղար
- Լեւոն Սրկ. Էսիբով - խորհրդական
- Վարուժան Ալթըպարմաքեան - խորհրդական
- Դոկտ. Արթին Քնանեան - խորհրդական
- Հոգշ. Տ. Բագրատ Մ. Վրդ.

Պերճեկեան - խորհրդական  
Հոգշ. Տ. Սասուն Մ. Վրդ.  
Զմրուխտեան - խորհրդական  
Հոգշ. Երեմիա Վրդ. Աբգարեան - խորհրդական  
Արժ. Տ. Մանուկ Ա. Քհնյ.  
Մարգարեան - խորհրդական  
Արժ. Տ. Սերովբէ Քհնյ. Ալանձեան - խորհրդական :

Ժողովական այս օրերուն յաջորդող Կիրակի՝ Մայիսի 7-ին Առաջնորդ Սրբազանը ուխտի պատարագ մատուցեց Առաջնորդանիստ Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարում, որուն ներկայ էր հաւատացելներու հոծ բազմութիւն:

Իր խօսքին մէջ Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց հաւատացեալներուն տարիներու ընթացքին ցուցաբերած սիրոյ եւ աջակցութեան համար: «Որպէս ձեր հաւատարիմ ծառայ, Հիւսիսային Ամերիկայի Հայ Եկեղեցու Արեւմտեան Թեմի առաջնորդ ընտրուելու 20-րդ տարեդարձի առթիւ կը վերահաստատեմ իմ հովուական կոչը՝ նորոգեալ նուիրումով եւ եռանդով ծառայելու մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի հօտին», ըսաւ Յովնան Սրբազանը: Ս. Պատարագէն յետոյ հաւատացեալները հրաւիրուեցան հիւրասիրուեցան՝ այդ նպատակով կազմակերպուած ընդունելութեան ժամանակ:

Ի դէմս հաւատաւոր մեր հայորդիներու, կը շնորհաւորենք նորընտիր բոլոր անդամներուն եւ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին՝ գրեթէ միաձայն վստահութեան քուէի համար, եւ կը մղովթենք բարձրացուած ծրագրերու իրագործում, ի շահ մեր եկեղեցւոյ, ազգի եւ հայրենիքի:

# Երգչուհի Սիպիլի Համերգը Մեծ Համակրանքով Ողջունուեցաւ Թեհրանի Մէջ

Պոլսահայ սիրուած երգչուհի Սիպիլ անցեալ շաբաթավերջին մենահամերգով մը հանդէս եկաւ Թեհրանի մէջ: Այս բացառիկ համերգները կազմակերպուած էին հայ մարզամշակութային «Նայիրի» միութեան արուեստից բաժանմունքին եւ «Սիփան» միութեան կողմէ:

Սիպիլ իւրաքանչիւր երգէն առաջ հանդիսատեսին հետ բաժնեց տպաւորութիւններն ու երգի ստեղծման պատմութիւնները: «Նայիրի» սրահի երգիքին տակ կազմակերպուած համերգի ընթացքին հանդէս եկան նաեւ «Սիփան» պարախումբի սաները:

Սիպիլ այլ երգերու կարգին մեկնաբանեց «Մարալ Մէրը», «Տեանեմ Անին ու Նոր Մեռնեմ», «Աւորայի Աղօթք»-ը եւ 44 օրուայ արհաւիրքի հերոսներուն նուիրուած երգը:

Վերոյիշեալ համերգը՝ կրկնուեցաւ նաեւ Զէյթուն քաղաքամասի «Նայիրի» միութեան Արցախ սրահին մէջ: Զոյգ համերգներուն ալ ներկայ գտնուեցան խուռներամ բազմութիւն մը վայելելով Սիպիլի կատարումները:

«Մարմարա»:

[www.massispost.com](http://www.massispost.com)  
daily news updates

AUGUST 27 • 2023

# SAVE THE DATE

AEBU 5<sup>TH</sup> ANNUAL SCHOLARSHIP AWARDS CEREMONY & GALA

DE LUXE BANQUET HALL  
Burbank, California



### Յովհաննէս Բաչկովը Բռնցքամարտի Աշխարհի Առաջնութեան Քառակի Պրոնգէ Սետալակիր Է

Հայաստանի բռնցքամարտի հաւաքականի անդամ, Ողիմպիական խաղերու պրոնգէ մետալակիր, Եւրոպայի եռակի ախոյեան Յովհաննէս Բաչկովն աշխարհի առաջնութեան դարձաւ պրոնգէ մետալակիր:



Ուզպէքիստանի մայրաքաղաք Թաշքենտի մէջ ընթացող աշխարհի առաջնութեան 63,5 քկ ծանրութեան կիսաեզրափակիչի ընթացքին Բաչկովը մրցեցաւ Ուզպէքիստանից Ասիայի ախոյեան Ռուսլան Ապտուլաեւի հետ: Բաչկովը զիջեցաւ 5:0 արդիւնքով եւ բաւարարուեցաւ իր 4-րդ պրոնգէ մետալով:

Նախապէս Հայաստանի բռնցքամարտի հաւաքականի անդամ, Եւրոպայի առաջնութեան պրոնգէ մետալակիր Նարեկ Մանասեանը դարձաւ աշխարհի առաջնութեան պրոնգէ մետալակիր: 92 քկ ծանրութեան կիսաեզրափակիչին Մանասեանը մրցեցաւ Եւրոպայի ախոյեան Իտալիոյ ներկայացուցիչ Ազիզ Ապեա Մուհիտինի հետ: Մանասեանը պարտուեցաւ 0:5:

### «Ֆէյենուրտը» 16-րդ Անգամ Նուաճեց Զոլանտայի Ախոյեանութիւնը



«Ֆէյենուրտը» նուաճեց ֆուտպոլի Հոլանտայի ախոյեանի տիտղոսը: Երկրի առաջնութեան 32-րդ հանգրուանին «Ֆէյենուրտ» 3:0 արդիւնքով պարտութեան մատնեց «Կոու Ըհետ Իկլսին» եւ 79 կէտով գլխաւորեցէ մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղը գտնուող «ՊՍՎ Էյնտհովենը» 31 խաղէն յետոյ ունի 68 կէտ:

Առաջնութեան աւարտին մնացած է երկու հանգրուան: «Ֆէյենուրտը» երկրի ախոյեան դարձաւ 16-ր անգամ ըլլալով: Նախորդ անգամ խումբը տիտղոսը նուաճած էր 6 տարի առաջ:

### «Տորթմունթի» Յաղթանակը՝ 5:2

Գերմանիոյի առաջնութեան 32-րդ հանգրուանին Պորուսխայի «Տորթմունտը» սեփական դաշտին վրայ մրցեցաւ Պորուսալի «Մոնչնկլատպախի» հետ եւ պարտութեան մատնեց զայն 5:2 արդիւնքով:

Դաշտի տէրերու կազմէն Տուբլի հեղինակ դարձաւ յարձակող Սեպաստիէն Ալերը, աչքի ինկան նաեւ հոլանտացի յարձակող Տոնիել Մալէնը, անգլիացի կիսապաշտպան Զոտոյ Պելլինկեմը եւ ամերիկացի կիսապաշտպան Զիովանի Ռեյնան:

«Տորթմունտ» 67 կէտով երկրորդն է եւ առաջատար Միւնխի «Պայերն»-ն է 1 կէտ:

### Սփապի Տուպը Նպաստեց ՊՍԺ-ի Յաղթանակին

Ֆրանսայի առաջնութեան 35-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ը իր դաշտին վրայ մրցեցաւ «Այաչոյի» հետ եւ յաղթեց 5:0 արդիւնքով:

Տուպլի հեղինակ դարձաւ ֆրանսացի յարձակող Կիլիան Մփապէն: Հիւրերու բերդը գրաւեցին նաեւ սպանացի կիսապաշտպան Ֆապիան Ռուիսն ու մարտի պաշտպան Աշրաֆ Հաքիմին, որ վերջաւորութեան կարմիր քարտ ստացաւ: Ինքնակոլի հեղինակ դարձաւ կիսապաշտպան Մոհամէտ Եուսուֆը:

ՊՍԺ-ը 81 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 6 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Լանսին»:

### «Ռեալը» Պարտութեան Մատնեց «Խետաֆէին»

Սպանիոյ առաջնութեան 34-րդ հանգրուանին ախոյեան «Ռեալը» հիւրընկալեց «Խետաֆէին»-ը եւ յաղթեց նուազագոյն արդիւնքով:

70-րդ վայրկեանին կոլի հեղինակ դարձաւ սպանացի յարձակող Մարքո Ասենսոն:

Արքայական խումբը 71 կէտով երկրորդն է եւ 2 կէտ առաջ է երրորդ տեղը գտնուող Մատրիտի «Աթլետիքոյն»-ը, որ մէկ խաղ նուազ կատարած է:

### Զաւին Առաջին Ախոյեանական Տիտղոսը Նուաճեց «Պարսելոնայի» Գլխաւոր Մարզիչի Պաշտօնին

«Պարսելոնան» առաջին անգամ նուաճեց Սպանիոյ ախոյեանի տիտղոսը Զաւիի գլխաւորութեամբ: 43-ամեայ սպանացի մասնագէտը «Պարսելոնայի» գլխաւոր մարզիչի պաշտօնը կը զբաղեցնէ 2021թ. Նոյեմբերէն:



Այս մրցաշրջանին գաթալոնական խումբը նուաճած է նաեւ Սպանիոյ սուպերգաւթը:

Զաւին «Պարսելոնայի» խաղացողի կարգավիճակին մէջ 8 անգամ դարձած է Սպանիոյ ախոյեան:

«Պարսելոնան» 27-րդ անգամ հռչակուեցաւ երկրի ախոյեան: Նախորդ անգամ խումբը ախոյեան դարձած էր 2019-ին:

### «Ինթերի» Յաղթանակը, Միսիթարեանի Կոլային Փոխանցումը

Իտալիոյ առաջնութեան 35-րդ հանգրուանին փոխախոյեան «Ինթերը» ընդունեց «Սասուոլոյին» եւ յաղթեց 4:2 արդիւնքով:

«Ինթերէն» տուպլի հեղինակ դարձաւ պելճիգացի յարձակող Ռոմէլու Լուքաքուն: Աչքի ինկաւ նաեւ արժենթինացի յարձակող Լաուտարո Մարթինսը, որուն կոլային փոխանցում կատարեց կիսապաշտպան Հենրիխ Միսիթարեանը: Հայ ֆուտպոլիստը փոխարինուեցաւ 61-րդ վայրկեանին:

Մէկ կոլ ալ սեփական դարպասը ուղարկեց հիւրերու պրագիլցի պաշտպան Ռուանը:

Երրորդ տեղը գտնուող «Ինթեր» 66 կէտով հաւասարեցաւ երկրորդ տեղը ընթացող «Եուվենթուսին», որ մէկ խաղ նուազ կատարած է:

### Արման Աղամեան Աշխարհի Ախոյեան



Քաթարի մայրաքաղաք Տոհայի մէջ կատարուող ճիւտոյի աշխարհի առաջնութեան ախոյեան հռչակուած է Ռուսաստանի ներկայացուցիչ, Եւրոպայի ախոյեան Արման Աղամեանը:

100 քկ ծանրութեան եզրափակիչին 26-ամեայ վոլկովրատցի մարզիկը յաղթած է կրկնակի ողիմպիական եւ աշխարհի ախոյեան, չէիս Լուկաշ Կրպալեկին:

### «Պարսելոնան» Լոս Անճելըսի Մէջ Կը Մրցի «Արսենալի» Հետ

«Պարսելոնան» ամրան ըջագայութեամբ կը ժամանէ ԱՄՆ: Սպանացի Զաւիի գլխաւորած խումբը Յուլիսին չորս հանդիպում կը կատարէ Ամերիկայի տարբեր քաղաքներուն մէջ:

Յուլիսի 22-ին գաթալոնական խումբը Սանթա Քլարայի մէջ կը խաղայ Թուրինի «Եուվենթուսի» հետ, Յուլիսի 26-ին՝ Ինկլիլուտի մէջ՝ Լոնտոնի «Արսենալին» հետ:

Յուլիսի 29-ին Արլինկթոնի մէջ տեղի կ'ունենայ սպանական «Էլ քլասիոն» «Պարսելոնայի» եւ Մատրիտի «Ռեալի» մասնակցութեամբ: «Պարսելոնայի» վերջին մրցակիցը ԱՄՆ-ի մէջ կ'ըլլայ Իտալական «Միլանը»:

### «Մանչեսթըր Եունայթըտը» ԱՄՆ-ի Մէջ Կը Խաղայ «Ռեալի» Եւ «Արսենալի» Հետ

Անգլիական «Մանչեսթըր Եունայթըտը» Յուլիսին ԱՄՆ-ի մէջ չորս ընկերական հանդիպում կը կատարէ:

Յուլիսի 22-ին Նիւ ձըրզիի մէջ «Մանչեսթըր Եունայթըտը» կը խաղայ Լոնտոնի «Արսենալի» հետ: Երեք օր ետք Սան Տիեկոյի մէջ մանչեսթերեան խումբի մրցակիցը կ'ըլլայ Ուեյլի «Ռեքսհեմը»: Յուլիսի 26-ին Հիւսթընի մէջ «Մանչեսթըր Եունայթըտի» մրցակիցը կ'ըլլայ Մատրիտի «Ռեալը»:

Վերջին մրցակիցը ԱՄՆ-ի մէջ կ'ըլլայ գերմանական «Տորթմունտը»: Հանդիպումը նախատեսուած է Յուլիսի 30-ին Լաս Վեկասի մէջ: